



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Կ Ա Ղ Ա Ն Դ Ջ Է Ք

Կ Ս Մ

Գ Ր Ա Կ Ա Ն Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Ա . Մ Ա Ս

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ

Մ . Գ Ո Ղ Փ Ո Ք Ճ Ե Ն Ա Ն



Печат. М. КАЛПАКДЖИАНЪ — ВАРНА

Տպարան Մ. Գալփաճեան

Վ Ա Ռ Ն Ա

1903

891.99

4-17

31.99

1-17

# Կ Ա Ղ Ա Ն Դ Ջ Է Ք

Կ Ա Մ

Գ Բ Ա Կ Ա Ն Փ Շ Բ Ա Ն Բ Ն Ե Բ

Ա. Մ Ա Ս

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Գ

Մ. Գ Ա Լ Փ Ա Ք Ճ Ե Ա Ն



Տպարան Մ. Գալփախնեան

Վ Ա Ռ Ն Ա

1903



17.05.2013

35275

19 NOV 2013

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հրատարակելով ներկայ գրքույկը, որ իր պարունակության պես պիտու է ընդունելու նաև ձեռնարկները հակառակ, այնքան ածան գին ունի, մեր գլխաւոր մտահոգութիւններէն մէկն ալ եղած է՝ ածանագին գրքերու հրատարակումով արտասահմանի հայրենական մէջ, ընթերցանութեան տարածումին տար հանդիսանալ մերովսանն:

Ներկայ նախախորձին մէջ երբ քաջաշերտինք, պիտի շարունակենք մեր հրատարակութիւններու շարքը, համեմտելով գանձնք շատ մը այլազան նիւթերով, որոնք՝ որքան շահեկան, նոյնքան եւ գրութեանը ու հետաքրքրական պիտի ըլլան ապահովապէս:

Ի ձեռնին պատրաստ ունինք արդէն **ԿՕՍԻԹ**ը ուր՝ ի մէջ այլոց, տգեղ դեմքեր — ի հարկէ առանց անձնականութիւններ վիրաւորելու — ձարտարօրէն պիտի մերկացուին այնպիսի գեղեցիկ սրախօտութիւններով որ, մարդ՝ անոնց ընթերցմանը ժամանակներու էն՝ լաւագոյններէն ու միեւնոյն ատեն, էն՝ կրթիչներէն մէկը վայելած պիտի ըլլայ:

Ունինք նաեւ ընկերութեան մեծագոյն ադիուն եղող «Սօնէ-Քառոյժ» եւ անոր տիեզերահոյակ խաղարանը՝ իր արքայն ահռելիութեանը մէջ ներկայացնող պոօթիւք մը, զոր յարգելի Հեղինակը խոտոսցած է մեզի տալ՝ հրատարակելու համար: Հոն այդ պոօթիւքին մէջ, պիտի ցուցադրուին — նկարուն ոճով մը — այն տարածաշի տոսանները, որ տեղի կ'ունենան կանանց սեղանին վրայ, քաղաքակիրք կոչուած ազգերու քթին տակ:

Մեր **ԵՐԿՈՒ ԽՕՍՔ**ը փակելէ առաջ, պար-



65533.67




տական կզգանք ինքզինքնիս հրատարակաւ շնորհակալութիւն յայտնելու աւելն աւելն, որունք հաճեցան իրենց գրութիւններով զարդարել «ԿՍՄԻԹ»-ը եւ խոստացան տեւակաւօրէն աշխատակցիլ, երբ մենք շարունակենք հրատարակել նմանօրինակ գրգոյհներ:

Այս առթիւ կոչ կրնենք նաեւ մեզի անձանօր կարող գրիչներու, որ՝ եթէ հաճին, «ԿՍՄԻԹ»-ին եւ կա՛մ ասկէ վերջ մեր ուրիշ հրատարակելիքներուն համար՝ իրենց շաշագոյն արտադրութիւնները դրկեն մեզի, որուն համար այժմէն մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

ՀՐԱՏԱՐԱԿԻԳ



## ԽՆԴՐԱՆՔ ՄԸ



Հայր մեր, որ արթուն  
Հսկես ամենուն,  
Լո՛ւր մեր խնդրանքին,  
Մեր հեծեծանքին:

. . . . .

Սուրբ պիտի գոչենք  
Անունդ, ու օրհնենք,  
Երբ վերջ տաս կեանքին  
Անխիղճ Գազանին:

Քու խօսքըդ ըլլայ  
Այս երկրի վրայ,  
Բաւ, փրկես Չարէն՝  
Մեզ, աստուածօրէն:

Անունըդ վրկա՛յ.  
Հաց ջուր քեզ ըլլայ.  
Միայն թէ ըզմեզ  
Իրմէն ազատես:

Պարտքերնիս՝ առատ  
Թո՛ղ ըլլայ, շատ շատ.  
Հերիք որ՝ Սուլթան  
Չիլիսէ մեր վրան:

Յայնժամ պիտ՝ օրհնենք  
Անունդ ու ըսենք.  
«Քուկդ է զօրութիւն,  
Քուկդ՝ արքայութիւն»:



«Քուկդ է փառք պատիւ  
Այսօր ու վաղիւ.  
Մեր սիրտն ալ՝ խորան՝  
Քեզի օրհնութեան»:





ՆՈՒԱԳ ՍԸ

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՐԻԿԻՆ

Ձիւնապսակ վե՛հ Մասիսի մտերիմ,  
Ի՞նչ կը խորհիս քաջ վեհոքրակդ աննման,  
Շրջապատուած նենգ տարրերէ ոխերիմ,  
Որ կը պաշտեն փառքը, կեանքը ու լուման:

Քու Սիօնէն վերակոչուած հե՛ղ զինուոր,  
Որ կեանքի խաչն այնքան հեշտիւ կրեցիր,  
Ի՞նչ վիշտ՝ աւա՛ղ, բոցակիզէ սրտիդ խոր,  
Ինչո՞ւ թափես խուլ հառաչներ անձանձիր:

Մեր Այրարատ ու Տաւրոսի գոռ շղթան  
Հպարտօրէն քեզ կ'օրհնե՞րքեն անդադար.  
Հայ տաճարներ Քու անունով կը թնդան,  
Ու անունըդ կ'արձագանքուի լեռ ու սար:

Ազգութեան մը պաշտամունքի՛ն առարկան,  
Բիւր բերաններ Քու անունովը կ'երգնուն.  
Մէն մի հայու սիրտը Գեղի է խորան՝  
Ի՞նչ քաջալեր ալ աւելի կ'ուզես Դուն:

Դեռ չէ սառած սիրտն այս ցեղին ու հոգին.  
Մեծ գործերու ընդունակ է Հայութիւն.  
Թո՛ղ միշտ միայ հոգւոյդ կնտուկ թանկագին  
Թո՛ղ վրէժի մէջ լողայ սիրտդ աննկուն:

Ամպածրար սէգ Մասիսի գագաթին՝  
Մըրըրիկներ շատ պայթեցան բօթաբեր.  
Բշել տանիլ՝ սպառնալով հայ ցեղին,  
Անյուսութեան ու կորուստի լերկ ափեր:

Մերթ թաթառը բնաջնջման ահարկու՝  
Հսկայական իր թափովը բարբարոս,  
Մերթ չարանենգ լեզուները բանասարկու  
Ձո՛ւր ճգնեցան մարել իսպառ հայ փարոս:

Ա՛խ նա մնաց ու կը մնայ դեռ դարեր,  
Երբ մինչև իսկ Բըրբիշոյներ իսկ վիտան.  
Նա կը մնայ զերդ կոթող մը անվեհեր,  
Որ կ'անդոսնէ բնութեան խաղերն բազմազան:

Ոչ Սելեկեան, ոչ Լուկուլլոսն իսկ գոռոզ՝  
Չէ՛, չը կրցան մեզ դարձնել յիշատակ.  
Հայուն առջև տեղի տուաւ ինք Պերոզ՝  
Ի հեճուկըս իր ուխտերուն վառ ու տաք:

Նոր սերունդը, նոր մանուկը առօրեայ,  
Աչքը յառած խաչանիշուած ճակատիդ,  
Յո՛յս, քաջալե՛ր, կենդանութի՛ւն կը գոռայ.  
Յո՛յս, կեանք սիփե՛՛ հա՛յրիկ, առջիդ ու ետիդ:

Սեպուռն



ԿԱՐՕՏԸ

Ինչո՞ւ, երբ հոյ՞ն ու ամպեր՝  
Չուեն աշխարհ մ'հեռակայ,  
Եւ ջինջ արևն յուսաբեր  
Վերէն՝ ջերմիկ գուրգուրայ,  
Իր վանդակէն՝ անհամբեր՝  
Սիրտըս, ինչո՞ւ քեզ սուրայ:

Աշուղ





ԽԱՅՈՒՆ  
ՀԱՅՈՒՆ

Խաչ մը քեզի,  
Խաչ մը ինձի.  
Շալկած խաչեր,  
Բարձրանանք վեր.  
Մեր վրիժու  
Բոցն ահարկու՝  
Մատնէ ի լաց,  
Մայրեր թըրաց:

Խաչը սուրն է նուիրական,  
Ուր երեք բան գրուած կան՝  
Հայուն միակ Երրորդութիւն.  
Վրէ՛ժ, արի՛ւն ու փրկութիւն:

Ուրեմն մենք  
Սուրը գրկենք  
Եւ խաչի տեղ՝  
Միշտ սիրազեղ,  
Փարինք անոր  
Որ ամեն օր  
Շաչէ շողայ.  
Ձերդ Եհովայ  
Յոյց տայ ճանբան  
Ազատութեան:

ՍԻՐԱ

ՍԻՐՈՅ ՄԸ ՀՈԳԵՎԱՐԲԸ

Մխացի՛ր, վառեցա՛ր  
Սիրոյ տենդոտ բոցին մէջ:  
Սըլացա՛ր, վերացա՛ր  
Հեշտանքներու ծուխին մէջ.  
Աշխարհը մոռացա՛ր  
Փարուսներու երկնից մէջ:  
Բայց երբ բոցը մարեցաւ,  
Եւ ծուխն համակ ցնդեցաւ  
Հալ ու մաշ սըմքեցար՝  
Սըրտիդ մոխրակոյտին մէջ.  
Որ հառաչով մը նըւաղ  
Դեռ կը ցնցուի տխրագինս  
— Դա կարօտն է անսուաղ  
Որ կ'աւանդէ իր հոգինս


Աշուղ

\* \* \*

ՍԻՐՈՅ ՎԵՐԱՊՐՈՒՄԸ

Թէ մխացի, թէ հալեցայ  
Քուրային մէջ հրաշէկ.  
Ծուխը՝ երկինք գուլայ գուլայ,  
Վեր բարձրացաւ սև ու շէկ.  
Բայց այդ ծուխը՝ հոնտեղ՝ շիթի  
Փոխուած, իջաւ նորի մը  
Սրտին վրայ ո՛հ դեռատի...  
Ուր կեանք առաւ և իմը...:

Տերվիշ





### Յ. ԶԱԳՐԲԱՆԻ ՅԻՍՆԱՄԷԿԻՆ ԱՌԹԻԻ

1897

Գնա մեռի՛ր, եկուր սիրենց

Ձէյթունցի ես, ժայռի ձագ ես, հերոս կամ թէ նահատակ,  
Արդարութեան միշտ ջատագով՝ զրկանքի թիւն համրեցի՞ր.  
Տուն արտօրէ՛ք, կի՛ն ու զաւակ եւ ծաղկատի քո հասակ՝  
Իտէալիք զո՛ն տուիր դուն. աւերակաց չափն առի՞ր:

Թռչըտեցար միշտ աննկուն, հովտէ հովիտ, սարէ սար,  
Առիւր տուիր սուր ու գնդակ. վէրքերուդ լաթ ունեցա՞ր.  
Տասնեակ շուներ դու չամփրեցիր. քաջի անուն ստացար.  
Օ՛ն, ցո՛յց ճակտիդ դափնէպակ, փուշերէ զատ բան գտա՞ր:

Թշուառութեան խոր անդունդէն՝ վեր նայեցար յուսահատ,  
Աստուած կանչել՝ օգնութեանդ. պարապին մէջ ի՞նչ տեսար,  
Վերն ալ ոչինչ, վարն ալ ոչինչ. արցունքներովդ մշտառատ.  
Ըսէ՛ տեսնեմ, դու այս կեանքէդ, յիսնամէկէդ ի՞նչ ուսար:

Ալ ի՞նչ ուրեմն, աղտոտ կենաց դու կը փարիս խօլբար.  
Այս յեղակարծ փոթորիկը կայծակէ զատ ի՞նչ ունի.  
Տեսա՞ր երբէք գլխիդ վրայ, անամպ երկինք, օր պայծառ.  
Ըսէ՛, այս մեծ ստութիւնը պատրանքէ զատ ի՞նչ ունի:

Մեռի՛ր մեռի՛ր, որ քեզ սիրենք,  
Յիսնամէկիդ տօն կատարենք.  
Քար չենք գներ. բայց չոր խօսքով  
Շատ կը թրջենք հողդ արցունքով:

Տ. Ճգնաշորեսևս



### ԱԶՔԵՐԴ . . .


Ըսէ՛, աղջիկ, ո՞ր մէկ էակ  
Փոխ տուաւ քեզ այդ աչքեր.  
Գանկիդ վրայ, ո՞ր հրեշտակ՝  
Վառեց երկու այդ ջահեր:

Ո՞ր զոյգ ասողը ինքնայօժար,  
Թողլով երկինքն ամայի,  
Եկաւ ընել՝ քեզ աչափառ,  
Այրող, մրկող զիցունհի:

Աչքերդ շանթեր ունին, կայծակ,  
Անոնք խորհուրդ մը թաքուն.  
Սա բիբերուդ մէջ սևորակ՝  
Անոնք երկինքն են անհուն:

Անոնք շիթեր ունին զուարթ՝  
Մըրիկներ ու ժպիտ.  
Մերթ ալէկոծ ու մերթ հանդարտ՝  
Անոնք լճակն են վճիտ . . . :

Տերվիչ



### Ս Ո Ւ Ր Ը

Սուրբ ու հզօր, սո՛ւր փայլուն,  
Սուրբէն ալ վեր  
Սուրբ զօրաւոր սուրն ես դուն՝  
Աշխարհի տէր:

Վեց դարերու գերութեան՝  
Բա՛ւ է նախատ,  
Սրբի՛ր ճակատն Հայութեան  
Գո՛ւն, սո՛ւրբ պողպատ:

Բա՛ւ ծոցեցինք մեր վզեր  
Ոչխարի պէս.  
Քեզմով ուռին մեր սրտեր  
Հպարտ ու վէս:



Թո՛ղ արիւնը թուրքերուն՝  
Երփներանգեն  
Քեզ, ո՛վ պողպատ, սո՛ւր փայլուն,  
Սուրբ . . . ամենքէն:

Մեր վրէժը՝ արիւնէ  
Թո՛ղ յագենայ,  
Օ՛խ, կուշտ ու կուռ թո՛ղ խմէ,  
Ու արբենայ:

Մեր կեանքին ալ, մեր պատուին  
Տէրն ես արթուն:  
Սուրբ, հրեշտակ, խօսք են սին.  
Աստուածն ես դուն . . . :

Սիրա

Յ Է Տ Ա Յ Ի Ի Ն Ե Ր Գ Ը

Ոսկի լուսին հորիզոնէն բարձրացած,  
Կամարին մէջ հանդարտ վերելք կը փորձէր.  
Մինչ մեր գիւղը՝ լե՛րկ, ամայի՛, փրճացած,  
Լուին կ'ողբար իր որդիներն ու գանձեր:

Դեռ վոհմակը նենգ քիւրտերու արիւնոտ  
Թափառայած վազրի մը պէս անխոտոր,  
Վայրագորէն կուշտ կ'ըմբռնէր արեան հոտ  
Ու մեր ինչքին կը ժողվբտէր հուսկ բեկոր:

Չարհուրանքը տունէ ի տուն կը խաղար.  
Շիկնոտ հարսեր, անուշ կոյսեր քըչքըչուած  
Դաշտերուն մէջ լըլկուէին . . . գողահար,  
Վա՛յ կարգալով իրենց բաղդին անիծուած:

Արձագանքը՝ անոնց կծու ողբերուն,  
Մինչ գիշերուան աղչամուղջին մէջ լսուէր,  
Յանկարձ մայրըս եկաւ հասաւ ա՛խ նկուն  
Ու չակորոյս արձակելով սուր ճիշեր:

«Փախչի՛նք տղաս, հրէշներու որջերէն  
Փախչինք լեռ ձոր, ձըգենք իժերն հոս տիրեն  
Աւերակ մը մնաց մերին չէն գիւղէն  
Թո՛ղ գայլերուն ըլլայ անի ապաւէն»:

Ու անտարբեր արիւններու մենք մէջէն  
Անցանք գիւղէն, մեր ոտքին տակ կոխելով  
Դիակները այն հայերուն՝ որ անգէն  
Չար ոտխէն կոտորուեցան բիւր յոլով:

Սեպուհ

Յ Մ Ք Ն Ա Ր Ս

Իմ քնարըս՝ մեր վշտերը՝ հիւսեցին  
Հայրենիքիս խոր ցաւերը անհամար,  
Չորըս նիւթող արիւնախանձ Օսմանցին՝  
Իր կողմն ունի դեռ ես բաղդին նենգ նժար:

Ու երգերըս՝ օ՛հ, խրոխտ են վայրենի,  
Ու կարծր են զերգ պողպատը դիմահար,  
Որուն մուխը կոտորածներն հայրենի  
Յանձանձեցին լիաբուռն, խօլբար:

Կ'երգեմ որո՞ս՝ սրածութիւնն ու աւեր,  
Որ զհայաստան արեան ծովով խեղդեցին.  
Վեհերոտներն, փորբոզիներն ու դաւեր,  
Չոր ոտխներ մերին առջև լարեցին:

Իմ գրիչըս չը դողդղար քամոյն տակ,  
Զի ուռականն յորձանապտոյտ զիս կուց.  
Ֆէտայի աւագեղբորս արիւն տաք՝  
Հերոսութեան անշէջ խարոյկն յիս վառեց:

Իմ քնարըս՝ մեր վշտերը՝ հիւսեցին  
Հայրենիքիս խոր ցաւերը անհամար,  
Չորըս նիւթող արիւնախանձ Օսմանցին՝  
Իր կողմն ունի դեռ ես բաղդին նենգ նժար:


Սեպուհ



# ԶԱՔՐԸՐԵԱՆ ԿԸ ՊՈՌԹԿԱՅ

[Բնութեան դեմ]

# ԽՕՍՔ ՀԱՅՈՒՆ



Չարիքներու բոյն  
 Ո՛վ դու Բնութիւն,  
 Ձախջախ քնարիս՝  
 Որ թեկին դպիս,  
 Քեզ դէմ անպայման  
 Անէծքներ տեղան:  
 Կ'ուզե՞ս որ համբեմ  
 Արարքդ անօրէն:

\* Մէկին տուիր շատ  
 \* Բարիք անաշխատ,  
 \* Իսկ միւսին չարիք,  
 \* Արցունք ու լալիք:  
 \* Այսքան վրան բաց  
 \* Վճիռդ ո՞վ կարդաց:  
 \* Լեզուդ անարդար  
 \* Արմատէն չորնար:

Զիյան\* է ըսած  
 «Տարափ մարդարտաց՝  
 Թ'իջնեն ցօղի տեղ  
 Վերէն՝ զերդ հեղեղ,  
 Յայգւոջ դժբաղդին՝  
 Կաթիլք չ'անկանին»:  
 Կշողիդ այդ չար  
 Կտորէր ծուռ նծար:

\* Սուր տուիր ձեռքին  
 \* Մեծ Մարդասպանին,  
 \* Վիզ տուիր Հայուն  
 \* Խոնարհ ու նկուն:  
 \* Այդ արեամբ կարծիք՝  
 \* Գա՞հըդ ներկեցիր:  
 \* Գահդ ա՛լ պալատդ ալ,  
 \* Գլխուդ գան տապալ:

Աշխարհն այս ամբողջ՝  
 Չէ՞ որ չարեաց որջ՝  
 —Միշտ ի խոյզ հացի—,  
 Անհամար լացի  
 Հրիբ Դու կայան  
 Անիրաւութեան  
 Ու մեծ աւերակ՝  
 Քու ոտքերուդ տակ:

\* Ուժ տուիր քրդին՝  
 \* Խլել անգօրին  
 \* Գրկէն, հարս զաւակ,  
 \* Քու աչքերուդ տակ:  
 \* Ու Դու լուռ վկան  
 \* Եղար պղծութեան . . . :  
 \* Այդ ցած վկային  
 \* Աչեր կուրնային:

Հանդէպ պալատին՝  
 Խրճիթն աղքատին.  
 Հարուստին առաջ՝  
 Նօթիին հոռայ:  
 Օրէնքդ ո՞վ գծեց  
 Ո՞վ ճակատագրեց.  
 Այդպէս գրողին  
 Մատնեք կտարէին:

\* Ըսէ՛, ես ինչի՞դ  
 \* Փարիմ ցնդածիդ.  
 \* Աչքըդ չը տեսնար,  
 \* Միրտորդ կարծր քար,  
 \* Հոգիդ սեւացած  
 \* Ստաննն ես դարձած:  
 \* Թուքս է միշտ բաժին՝  
 \* Քու ազտոտ ճակտին:

Յ. ԶԱՔՐԸՐԵԱՆ

(\*) Հոչակաւոր Թուրք բանաստեղծ Զիյա բաշա:

Մռայլին մէջ հնութեան՝ բաղդին հովը քմահաճ՝  
 Աշխարհիս չորս ծագերէն՝  
 Ժողովեց բերաւ սէզ ցեղեր՝ սէզ Մասիսին ստորոտ.  
 Անոնց աշխոյժ ձագերէն՝  
 Ազգ մը ծնաւ սէզ է՝ աշխոյժ, բազմալեզու, բազմերանգ,  
 Որ անտառի մ'հանդուսակ՝  
 Խրուած լերանց կուշտերուն մէջ, դէպի խոր ծմակներ,  
 Տարածուեցաւ համարձակ:  
 Քանի՛ քանի՛ անգամներ՝ զայն մորիկներ կատաղի  
 Յօշոտեցին յօտեցին.  
 Բայց ո՛ւր ինկան իր ոտեր, հոն ձգեցին նոր ծիլեր  
 Եւ ծառացան դէպ երկին.  
 Քանի՛ քանի՛ անգամներ, հուրն ու սուրը անխնայ՝  
 Գեանին ըրին զայն հաւասար  
 Բայց աճիւնով եւ արեամբ՝ արմատն անմեռ՝ պարարուած՝  
 Վեր ընծիւղեց միշտ դալար:

! \* \*

Հաստատ կեցի՛ր ո՞ հայ արմատ, բնիկ հողիդ՝ ո՛հ կառչած.  
 Այս փոթորիկն ալ կ'անցնի.  
 Դու դարերու ես ծնունդ, երէկուանն է թշնամիդ.  
 Նա վաղուան մէջ կեանք չունի:  
 Հաստատ կեցի՛ր, հայ սերունդ, անմեռունակ ժողովուրդ,  
 Եւ իրաւանցդ եղի՛ր տէր.  
 Վար գլորէ՛ Մասիսին ամպածրար կողերէն  
 Անհեթեթ քու պարեխներ.  
 Դրախտանման երկրիդ չուրջ՝ պարիսպ քաչէ անոնցմով՝  
 Եւ նոր սիրովն անառիկ  
 Քու զաւակաց, եօթն անգամ, այդ պարիսպը պարսպէ՛.  
 Եւ անոր ալ բուրբոտիք՝  
 Արեւելքէն եւ Մուտքէն, Հիւսիսէն եւ Հարաւէն՝  
 Թնդանօթներ թո՛ղ հսկեն  
 Լեցուած մեր հին ցաւերով՝ կազմ ու պատրաստ գոռալու՝  
 Ամբողջ ազգի մը կուրծքէն:

Աշոռ



# ՈՒԽՏԸ



Իբրեւ յիշատակ  
Իմ անկեղծ սիրոյս,  
Պահէ՛, անապակ  
Սրտիդ մէջ, հոգւոյս  
Մտնունջ սիրակէզ,  
«Թէ կը սիրեմ քեզ»:

Երբ դիտես անհուն  
Հորիզոնը, դուն  
Յիշէ՛ թէ անդին  
Էմանդ անձկագին  
Արցունք անհամար  
Թափէ քեզ համար:

Հառաչանք մը խոր,  
Կուրծքէս՝ ամէն օր,  
Յանձնեմ ալիքին  
Ծովու ծփանքին,  
Զօնել զայն սիրոյս՝  
Հատորին հոգւոյս:

Երբ լուս գիշերներ  
Հիւսես երազներ,  
Ես ա՛լ՝ միշտ անուշ  
Անձկաւոյդ ի յուշ,  
Արձագանք կ'ըլլամ  
անոնց՝ ու կուլամ:

Կուլամ դառնապէս  
Քառեակն օրերու,  
Ուր ասուպի պէս  
Թռար գացիր դու,  
Զիս թողլով ի սուգ  
Ի սուգ ու պատուք:

Անխօս պատկերըդ  
Դիտեմ ընդերկար,  
Ուր վե՛հ նայուածքըդ  
Փայլի սիրաւու.  
Այդ ակնարկ՝ հոգի՛ս,  
Կը սողորէ զիս:

Զուարթնոյն ձեռքով,  
Սիրարս՝ ո՛հ անձկով  
Վերձօնեմ առ քեզ,  
Քեզ՝ որ սիրակէզ  
Ինձ՝ հոգւովդ համակ,  
Դարձար հրեշտակ:

Դուն՝ որոյ աչքին  
Շիթերը անդին  
Շարան ու շարան  
Պէտք է՝ զայն լուան,  
Ընկալ դուն՝ այսօր,  
Սուրբ ուխտը անոր:



Երբ քաղցր արշալոյս  
Քեզ բերէ՛ սիրոյս  
Ողջոյնն, ամեն օր,  
Կ'երդնում, հաւատ՝ որ,  
Ան՝ ամենօրուան,  
Ուխտս է սրբազան:

Ս...

# ՔԱՌԵԱԿՆԵՐ

Երկու սիրակցորդ սրտեր

Նա—  
Ծաւի ծամերըդ՝ թէ ծուփ ծուփ ծփան,  
Մարմի՛ն թէ մարմար, սա դէմքիդ վրան,  
Քանի՛ ըզձամ ես ըլլալ կամովին  
Վարսիդ թելերուն շլթայուած գերին:

Նե—  
Հագագիդ սիրուն, խաղը թրթռուն՝  
Թէ երգէ անմահ ո՛հ սէրը անհուն,  
Քանի՛ ըզձամ ես՝ ըլլալ վառ զուարթ,  
Քու սիրափորփոք վարդըդ բարդ ի բարդ:

Նա—  
Դու իմ վառ վարդը ե ես քու խօսնակ,  
Թո՛ղ ուրեմըն քեզ երգեմ շարունակ  
Քեզմով խանդավառ ըլլամ թիթեռնիկ,  
Սյրիմ ու մրկիմ քեզմով, ո՛վ Շուշիկ:

Նե—  
Գերեզման չեմ ես... կեանքի հանգրուան,  
Ուր պէտք է ապրիս միշտ երջանկաւետ.  
Սիրէ՛ ու սիրուէ՛. քուկդ եմ անպայման  
Քուկըդ՝ ո՛հ, վահէ՛, այսօր ու յաւէ՛ տ:

Ս...

# ՆՈՒՔԻԻ ՄԸ ԱՌՓԻԻ

ՅԱՇԿԻՆԱԿ ՄԸ

Սիրովըդ ծակ ծակ, ո՛հ սիրաբու վճիտ  
Եւ կամ անգագրում արցունքներուս շիթ,  
Անուամբդ սրբացած, լաթիս այս կտոր  
Քեզ բերին նուէր, քե՛զ, հոգւոյս հատոր:

Ս...





ՎՐԻՊԱԾ ՍԷՐԸ

Արշալուսին՝ թեթե գեփիւռն ըլլայի,  
Այց ելլէի պարտէզին մէջ տենդալառ.  
Վարսին վրայ սա հայուհւոյն հոլանի՝  
Թառ կազմէի. փսփսայի ունկն ի վար.

«Գթա՛, աղջի՛կ. անձկօրէն  
Մաշուոցն եմ ես ամեն օր  
Քեզի հոգւոյս իմ խորէն.  
Ա՛խ, պաշտողն եմ սգաւոր»

Արշալուսին շողն ու շաղը թաց թացիկ՝  
Կամ աստղերէն կաթիկթած ցօղն ըլլայի.  
Գլխէն ի վար, դէմքին վրայ թափանցիկ՝  
Զեփիւռին հետ յուշիկ յուշիկ իջնէի

Արցունք թէ ցօղ, պաղ թէ տաք,  
Կակղելու կուրծքն անգուծին,  
Որ զրահն է ամրափակ  
Դրան՝ չքնաղ տաճարին:

Սիրտն է տաճար, որ՝ ով գիտէ, ո՞յր հաշւոյն  
Փուրքերու պէս հեն ի հեւ արօփէ.  
Նա կասկարմիր, բոց աչքերով սարսուռն  
Ամեն բոպէ, աղի արցունք կը թափէ:

Ես՝ իր սիրով կը մխամ,  
Իրեն համար միշտ, կուլամ.  
Պիշ կը նայիմ իրեն՝ ես.  
Ինք կը նայի դէն ու դէս:

Տեղախիշ

ՈՒՐԿԻՅ ԿՈՒԳԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Եթէ մենք զաւակներ ունենայինք — վեցամեայ  
թխորակ մանչուկը ի հարկէ Լեւոն պիտի կոչուէր եւ  
չորս տարեկան խարտեաչ աղջիկն ալ՝ Արմենուհի, որով-  
հետեւ այդ անուաները շատ աղուոր կը հնչեն — եթէ  
մենք զաւակներ ունենայինք՝ կ'ըսեմ, ես անոնց հետ  
երեկոյեան միջնադին կը նստէի մանկանոցը. — մանչուկը  
անոր «ախոռ» կ'ըսէ՝ որովհետեւ իր ձին սենեակին մէկ  
անկիւնը տեղաւորած է — եւ անոնք իմ զաւակներս  
չէին ըլլար, եթէ չուզէին ինձմէ հէքեաթ մը լսել եւ ես  
անոնց հայրը չէի ըլլար, եթէ իրենց մերժէի բան մը  
պատմել:

Եւ ես շատ վստահօրէն գիտեմ, որ այն ատեն ման-  
չուկը մէկէն իր խոչոր փայլուն աչքերը վեր պիտի վեր-  
ցընէր եւ ինձի հարցնէր «Հայրի՛կ, ըսէ՛, ո՞ւրտեղէն  
կուզան մանուկները»:

Ամեն հայր ասանկ հարցումի մը պատրաստուելու  
է, երբ իր մանչը վեց տարեկան կըլլայ. որովհետեւ ար-  
դէն այդ ատեն ժամանակն է որ փոքրիկ տղայ մը սկսի  
այդպիսի կարեւոր խնդիրներով զբաղուելու եւ անոնց մա-  
սին իր անձնական կարծիքները կազմելու:

Եւ եթէ ես՝ ես չըլլայի, այդպիսի գերագոյն վայր-  
կենի մը պատմութիւնս սապէս պիտի սկսէի:

«Է՛հ, ո՞ւրտեղէն կուզան մանուկները».

Հանրապարտէզին մէջ, խոչոր, ձող ձող սրունքնե-  
րով պատկանելի կուռնկները չէ՞ք տեսեր եւ կամ դուրսը  
քաղաքին առջեւ — անանկ հեռուն, որ ելեքտրական  
կառքերը չեն կրնար մինչեւ հոն երթալ — չէ՞ք լսեր  
թէ լիճ մը կայ: Մանուկները այդ լիճին մէջ պտուկած  
են . . . եւ կուռնկները . . . :

Բայց կը յուսամ, որ մանչուկս աւելի խմաստուն  
կը գտնուի ու կը հարցնէ ինձի պատմութիւնս ընդհա-  
տելով: «Այո՛, բայց ո՞վ կը դնէ մանուկները լիճին մէջ»:

Ու գիտեմ, որ այս բոպէիս, կամացուկ մը, շատ  
կամացուկ՝ մանկանոցին դուռը կը բացուի եւ մայրը  
ներս կը մտնէ՝ ըստ սովորականին՝ հէքեաթը մտիկ ը-  
նելու: Եւ ես՝ ես չէի ըլլար, եթէ իմ փոքրիկ բնագէ-  
տիս՝ պատմել ուզած սուտիս վրայ կասկարմիր չըլլայի:



Այն ատեն հէքեաթս բոլորովին տարբեր կերպով կը պատմէի, ինչ որ ալ եւս հէքեաթ չը պիտի ըլլար, այլ գեղեցիկ, շատ, շատ աւելի գեղեցիկ պատմութիւն մը, քան գոր ես հոս կրնամ արտայայտել: Անոր մէջ պիտի ըլլար իմ ամբողջ սէրս, երախտագիտութիւնս ու ներքին համակրանքս եւ զաւակներս — եթէ զաւակ ունենայինք — խոշոր, հասկցող ու վերջիչող աչքերով աւկանջ պիտի զնէին մտազիր ու իրենց մօրը պիտի նայէին, որպէս թէ զայն դեռ բնաւ տեսած չըլլային եւ զանի աւելի բռն սիրով մը պիտի սիրէին:

Ու իմ հէքեաթս, որ բնաւ հէքեաթ չէ, այսպէս պիտի ըլլար:

«է՛հ, ո՞ւրտեղէն կուգան մանուկները»

Դուք ո՞ւրտեղէն եկաք:

Վե՛րը, երկնից մէջ՝ ուր ձեր վարագոյրներուն մէջտեղէն գիշերային աստղերուն փալիւլիւլը կը տեսնէք, հոն՝ այսպիսի երեկոյներ, մանկիկ հրեշտակները կը խաղան ու երբ օդը շատ գեղեցիկ է, անոնք վար՝ երկրիս վրայ կը նային ու նայուածքնին կը նետեն իրենց սիրած եւ կամ զիրար սիրող մարդիկներու պատուհաններէն ներս:

Եօթը տարի առաջ մեր պատուհանէն ալ ներս նայեցան ու տեսան որ մայրիկը եւ ես միատեղ նստեր ենք: Անոնք տեսան որ մենք՝ իրենց ուղածին պէս զոյգ մըն ենք ու շատ կը փափաքինք ունենալ Լեւոն մը եւ Արմենուհի մը . . . ու այդ վարպետուկ հրեշտակները երբ այսպիսի բան մը կոահեն, ձեռք ձեռքի տուած, աստղի մը շուրջը պար բռնելով, կ'երգեն՝

«Երկնից պարտեզ, փայլուն աստղ,

Հոն՝ վա՛րը զաւակ պէտք է.

Երկու սիրուն գանուկներ՝

Նախ մանչ մը՝ վերջն ալ աղջիկ.

Ո՞վ պիտ' կատարէ սա զոյգին իղձը,

Ո՞վ պիտ' անոնց նախ մանչուկ մը տանի»:

Ասոր վրայ, հրեշտակներու ամբողջ շղթան նորէն աստղին շուրջը կը զառնայ ու յանկարծ իրարու ձեռք թող տալով, ամեն մէկը զատ զատ աստղին սրածայր պոչերէն մէկուն կը վազէ. — որովհետեւ ատանկ աստղ մը՝ շատ մը պոչեր ունի՝ Ծննդեան ծառէն կախուած աստղիկէն աւելի շատ ու աւելի խոշոր — : Այն հրեշ-

տակը՝ որ աւելի ուշ հասած ըլլալուն համար, պարագ պոչ չը գտնէր, պարտաւոր է երկիր իջնալ ու աւետիս տանիլ. եւ որպէս զի ձամբան չը կորսնցունէ, այն աստղին ծայրէն կտոր մը կը փրցնէ եւ զէպի երկիր կը նետէ, որ լոյս տայ:

Ու վարը իրենց սենեակին մէջ, այդ երկու մարդիկը — մայրիկը ու ես — այդ պահուն պատահմամբ երկինք կը նային ու երբ ասուպին իջնալը կը տեսնեն, աչքերնին կը զոցեն ու սրտանց բան մը կը փափաքին: Եթէ երկուքին ալ փափազածը միեւնոյն բանն է, անպատճառ կը կատարուի:

Տեսէ՛ք, մենք երկուքս ալ այդ երեկոյին անպատճառ Լեւոնը ուղեցինք, երբ արդէն հրեշտակն ալ հասեր էր մեր պատուհանին առջեւ: Անիկա երեք անգամ ապակիին վրայ փչեց եւ իր օրհնութիւնը կարգաց: Ասոր վրայ, ապակին արծաթի պէս փայլեցաւ ու մենք հասկցանք որ մեր փափազը պիտի կատարուի:

Պատմութիւնս հոս հասնելուն պէս, երկու մանուկներուն աչքերը պիտի նմանէին ապակիին՝ որուն վրայ հրեշտակը փչեր էր. անոնց այտերը պիտի բոցավառէին եւ Լեւոն իր անձին մեծ կարեւորութիւնը պիտի զգար, որովհետեւ զինքը աւետելու համար հրեշտակ մը՝ երկինքէն իջնալու ստիպուեր էր: Բայց Արմենուհին քիչ մը անհանգիստ պիտի ըլլար ու ծունկերուս չփուելով — որովհետեւ ինք ալ աշխարհիս մէջ է — պիտի փափագէր շատ իր ալ պատմութիւնը լսել :

Սակայն ես հիմայ պիտի սկսէի ալ եւս լուրջ ու հանդիսաւոր երեւոյթ մը առնել, քանի որ իմ հէքեաթս որ բնաւ հէքեաթ չէ, հիմա իրապէս սկսելու էր:

Պիտի առնէի իմ սիրելի, պաշտելի կնոջս ձեռքերը իմ ձեռքերուս մէջ եւ զանոնք տղոց առջեւ երկարօրէն պիտի համբուրէի, ինչ որ միշտ մեր զաւակներուն վրայ խորունկ ու լաւ տպաւորութիւն կ'ընէ: Մայրը պիտի կենար մեր առջեւ եւ մանուկները իմ ծունկիս շուրջը ուրիշ բան չը պիտի ընէին, եթէ ոչ զայն զիտել ու զարմանալ թէ նա ինչպէս իրենց առջեւ կը վսեմանայ ու կը բարձրանայ, միշտ աւելի մեծ, աւելի գեղեցիկ, աւելի սուրբ:

Կը տեսնե՞ք՝ սիրունիկներս, երբ այդպիսի գեղեցիկ հրեշտակ մը վար գալով, մարդոց՝ Լեւոն մը եւ կամ Արմենուհի մը — այո՛, սիրելի աղջիկս, նաեւ Արմենուհի



մը — կ'աւետէ, անոնց մանուկ մը կ'ընծայուի, բայց իսկապէս միայն հօրը կ'ընծայուի, քանի որ մայրը աղ-  
ւորիկ հրեշտակէն սոսկ հրաման կ'ընդունի հօրը մանուկ  
մը տալու:

Այն ատեն մօրը սրտին տակ կ'սկսի ծլլի մանկիկը՝  
այնպէս՝ ինչպէս ես ձեզի անցեալ տարի լուբիա մը ցոյց  
տուի, որ խոնաւ հողէն պէտք եղած հիւթն ու զօրու-  
թիւնը առնելով, կը ծլէր ու կ'աճէր: Պզտիկ մանկիկն  
ալ այդպէս կը ծլի ու կը մեծնայ մօրը սրտին ներքեւ  
ու մայրը անոր զօրութիւն կուտայ, իր արիւնովը կը  
սնուցանէ ու կը տաքցնէ զայն: Իր սիրովը կը բոցավառէ  
եւ իր յոյսը թէ անիկա գեղեցիկ ու բարի մանկիկ մը  
պիտի ըլլայ, կ'աճեցնէ ու կը մեծցնէ զայն: Մայրիկը  
զուրս ներս կ'երթայ, տանը մէջ կը բանի կը դատի,  
բայց անիկա իր ծոցին մէջ սնուցած մանկիկին՝ իր գե-  
ղեցկութիւնը, իր զօրութիւնը, իր բարութիւնը փոխան-  
ցելու երջանիկ գիտակցութեամբ այնքան յափշտակուած  
է, որ կարծես ամպի մը վրայէն կ'ընթանայ: Իր բոլոր  
խորհուրդն ու զգացումը՝ իր սրտին տակ մեծցող կեան-  
քին վրայ կեդրոնացուցած է, որուն մէջ կը հոսեցնէ իր  
իսկ կեանքը: Ու մանկիկը անոր սրտին տակ կ'զգայ թէ  
որչափ սէր զինքը կը տաքցնէ եւ մօրը սնուցիչ արիւնը  
որչափ գեղեցկութիւն կը բերէ իրեն:

Նա կ'աճի ու կ'աճի եւ միշտ աւելի կը մեծնայ ու  
կը գեղեցկանայ:

Կը տեսնէ՞ք՝ մանուկներ — այս պահուս բառերն  
այնպէս հնչելու էին, որպէս թէ հեռուոր ու հանդիսա-  
կան երգէտն մը կ'ընկերանար անոնց — այս մօրը սըր-  
տին տակ պառկած էք. նա ձեզ իր արիւնով կերակրած  
է եւ իր մարմնոյն մէջ սնուցած ու խնամած է:

Եւ ասիկա հէքեաթ չէ, թէեւ ամենէն մեծ ու նը-  
ւիրական հէքեաթը եւ կամ հրաշքը որ երկրի վրայ կը  
պատահի. ամենէն փառաւոր հէքեաթը՝ որուն առջեւ  
մեծագոյն իմաստուններն ալ կը խոնարհեցնեն իրենց՝  
զլուխները, երբ զայն անգամ մըն ալ լսեն. ու հօրա-  
գոյն կայսրերը ծունր կը դնեն, երբ կ'ուզեն իրենց մայ-  
րերուն շնորհակալ ըլլալ այն սիրոյն համար, զոր անիկա  
նուիրած էր իրենց, երբ դեռ աշխարհի լոյսը տեսած  
չէին:

Ու այդ պատճառաւ՝ հիմայ դուք ալ չէք համարձա-  
կիր ձեր սիրելի մայրը դիտելու: Պէտք չէ որ այս հէք-

եաթը լսած պահերնուդ՝ ձեր այտերուն վրայէն գլորող  
արցունքներէն ամէնաք, որովհետեւ անոնք՝ սիրոյ եւ  
երախտագիտութեան արցունքներն են ու ձեր մայրը՝  
ձեր կողմէն հազար անգամ այդ երախտագիտութեան եւ  
սիրոյ արժանացած է:

Բայց հիմա ձեզի այս հէքեաթը մինչեւ ծայրը պատ-  
մեմ: Նոյն ատեն հրեշտակները երկնից մէջ իրենց խա-  
ղերը շարունակեցին խաղալ. երեկոյ երեկոյի ետեւէն  
անցաւ եւ լուսինը հարիւր ու հարիւր անգամներ երկնից  
վրայ լողաց:

Վերջապէս երեկոյ մը առջի անգամ երկինքէն մեզի  
եկող հրեշտակը նորէն մեր պատուհանէն ներս կը նայի  
եւ միւս հրեշտակներն ալ կը կանչէ. անոնք աստղին  
բոլորտիքը կը շարունակեն ու կը նային մերթ մեր սենեա-  
կին ու մերթ աստղին. որովհետեւ այն պոչը՝ զոր հը-  
րեշտակը այն ատեն կոտորեց էր, բուսեր ու ձիւղ այդ  
երեկոյին ամբողջացեր է եւ անիկա մեղմ ու անուշիկ երկ-  
նից կապոյտ պարսէզին մէջ կը ցոլայ հպարտօրէն: Այն  
ատեն հրեշտակները նորէն իրարու ձեռք կուտան եւ  
շատ մեղմիկ երգ մը կ'երգեն, ա՛յնպէս մեղմ եւ ա՛յնպէս  
անուշ, որ երկրի վրայ ոչ մէկ մարդ կրնայ լսել կամ  
կրկնել. բայց այդ երգը կը նշանակէ թէ մեզի մանուկ  
մը պիտի ծնի, թէ մայրիկը անոր՝ իր կեանքէն պէտք  
եղածին չափ տուած է եւ թէ անիկա ալ եւս աշխարհ  
զպտու է:

Հրեշտակը նորէն երկիր կ'իջնայ — այս անգամ  
ճամբան զտնալու համար լոյսի պէտք չունի — ու նորէն  
երեք անգամ ապակիներուն վրայ կը փչէ. մայրիկը իս-  
կոյն կը տեսնէ դուրսը կեցող հրեշտակը. իրեն անանկ  
կը թուի թէ ուրախութենէն պիտի մեռնի, որովհետեւ  
հիմայ՝ իր զաւակը, իր հարազատ զաւակը իրեն պիտի  
պարգեւուի:

Ու մանուկը մօրը սրտէն կը փրթի. մայրը կը նը-  
ւաղի. ալ եւս չը տեսնէր հրեշտակը. բայց վերջը նորէն  
կ'սթափի իր խոր ցաւերէն եւ անա իր քովիկը բան մը  
պառկած կը տեսնէ, որ խոշոր, զմայրուն աչքերով իրեն  
կը պչնու: Բայց ասիկա՝ հրեշտակը չէ, այլ իր զաւակը.  
հայրն ալ քովիկը կեցած է. անոր ալ զաւակն է. մայրը  
կը ժպտի ու ինդութեամբ զեղուն հօրը կը յանձնէ ման-  
կիկը. ու այս պահուս անոնք իրապէս երկնից մէջ հրե-  
շտակներու երգելը կը լսեն . . . :



կը տեսնէ՞ք՝ զաւակներս, այս է հէքեաթը եւ մանուկները այսպէս կուզան աշխարհ:

Ես գիտեմ որ այս հէքեաթը պատմած պահուս, տըղոց վրայ մեծ հանդարտութիւն եւ մտածկոտութիւն պիտի ախրէ եւ մայրը մեր առջեւ կանգնած, իր էութեան խորերէն պիտի դողայ. ամօթխածութենէն եւ ուրախութենէն արտասուելը դժուարաւ պիտի զսպէ եւ կամացուկ մը, շատ կամացուկ, սենեակէն պիտի աներեւութանայ: Տղաքը բառ մը չը պիտի ըսեն, եւ հազիւ պիտի համարձակին շունչ առնել — այդպէս կ'ազդէ զուտ մարդկայինը՝ մարդուս զգացումներուն վրայ — եւ ես զանոնք գետնէն պիտի վերցնեմ՝ իւրաքանչիւր թեւիս վրայ հատ մը առած, անկողին պիտի տանիմ: Անոնք ընթրիքի համար ախորժակ չը պիտի ունենան. եւ իրօք, այն երեկոյին երբ իրենց ծագումին պատմութիւնը լսած են, անոնք ալեւս ուտելու պէտքը չունին:

Եւ մանչը իմ մանչս չէր ըլլար, եթէ այդ գիշերը իր երազին մէջ հրեշտակներ չը տեսներ եւ «Երկնից պարտէզ, փայլուն աստղ» երգը իր ականջին չը հնչեր. եւ աղջիկը իմ կ'սօջս աղջիկը չէր ըլլար, եթէ մայրութեան ցաւագին նախազգացումով իր բարձիկին վրայ չարտասուեր: Ես գիտեմ որ Լեւոն առտուն կանուխ պիտի արթննայ իրրեւ աւելի հասուն այր մը եւ ամեն բանէ առաջ իր պատկերագարդ անպատառելի գրքէն կուռնկը պիտի պատռէ զուրս նետէ. — խեղճը այս թռչունի մասին արդէն բաւական անհամ սուտեր կ'լլած է —:

Եւ այդ երեկոյին մայրը ինծի՝ իմ մարդկային, չափազանց մարդկային հէքեաթիս մասին՝ դժգոհութիւն պիտի յայտնէ, որուն դէմ ես ինքզինքս արիաբար պիտի պաշտպանեմ, որովհետեւ ես՝ մեր պարզատես դարուն մէջ, մանուկներու կրթութեան մասին իմ մասնաւոր ըմբռնումներս ունիմ եւ ես իմ հէքեաթս՝ որ բնաւ հէքեաթ չէ, աշխարհիս բոլոր հէքեաթներէն աւելի դարմանալի կը նկատեմ:

Եւ եթէ մայրը ինծի հաւատայ չուզէ, իրեն երկինքը կը ցցունեմ, ուր ճիշդ այդ պահուն, ասուպ մը՝ խոշոր աղեղ մը ձգելով, երկիր կ'իյնայ. եւ իր ականջին բան մը կը փսփսամ . . . :

Այն ատեն նա բոլորովին կը լռէ . . . :

Թարգմ.

Մեր պապերը դարեր առաջ թողուցին Կուռք ու մեհեան. կրակ տուին՝ ազգային Մեր պատմութեանց, որ չը մնայ յիշատակ Հին օրերէն, քառաթեւիդ շուքին տակ:

Խաչիդ յառած ա՛լ աչքերնիս՝ շարունակ, Մենք թողուցինք սուր, հրացան ու գնտակ. Ու անկորով ազգ մը եղած՝ այն օրէն Լալ ու ողբալ գիտցանք միայն մեղկօրէն:

Դժոխքիդ վախ, Արքայութիւն երկնային Գրաւեցին համակ ու չը մեր ցեղին: Գալու փառքով, Գալու վախով՝ միտք ու խելք Յափշտակուած, մոռցանք ներկան ու վայելք:

Մեր սևազգեստ կղերները մեզ ըսին. «Մէկ երեսնուդ երբոր զարնեն. դուք անդին Դարձէք անխօս, որ միւսին ալ՝ պերճօրէն, Փրկչական նոյն շա՛խ շրտա՛խը շնորհեն»:

«Գայլին առջև՝ դուք ոչխարը եղի՛ք միշտ, եւ կամ կատուին եղի՛ք մուկը ճիշդ ու ճիշդ. Հոգ չէ ձեզի թո՛ղ բզրկտեն. հերիք որ Ժառանգորդն էք արքայութեան երկնաւոր»:

Ըսին անոնք. ու մենք յօժար սուր երկաթ Դէն նետեցինք. առինք ոսկի ու արծաթ. Ու շինեցինք սրկիհ, քըլոց, խաչ բուրվառ Ծնձղաներով քեզ օրհնելու դարէ դար:

Քեզմէ ի զատ - յոյն թէ լատին - ջերմօրէն, Միւրիտներդ\* ալ պաշտուեցան մեր ցեղէն. Դուրս չը մնաց ոչ սուրբ Գէորդ, ոչ Մինաս Ոչ սուրբ Սարգիս, ոչ Կոմիտաս, Բառնաբաս:

(\*) Դարձող Տէրվիչներուն աշակերտները միւրիս կը կոչուին:



Տաճար կանգնել, վանքեր շինել հոյակապ.  
 Աս եղաւ մեր օրուան հարցը հրատապ.  
 «Հոգ չէ փլի ազգին տունը փառայեղ.  
 Եկեղեցի մենք կը կանգնենք անոր տեղ»:

Ըսինք, «մեզի պէտք չէ իշխան թագաւոր.  
 Փրկի՛ չն է մեր թագաւորը երկնաւոր»:  
 Ծուբին ի տես մենք՝ պատառը պատրաստի  
 Կորսնցուցինք երազներով սնտախ:

\* \* \*

Հիմակ եկո՛ւր հաշիւ տեսնենք՝ ո՛վ փրկիչ,  
 Փրկիչ մը որ փրկել չիյտես. այլ քանդիչ  
 Թուրքին, քուրդին թիկունք կ'ըլլաս, որ սրբեն  
 Հայ անունը երկրագունդիս երեսէն:

Քեզի ըլլան եկեղեցի, վանք, խորան,  
 Միայն թէ սա վառուած մոմին տաս փարան.  
 Խունկ ու կնդրուկ, ծնծղայ քըշոց, միշտ քեզի,  
 Քեզի ըլլան. մոմին փարան տո՛ւր մեզի:

Պետութիւններ կը կազմուին, գրամով՝  
 Զոր մսխեցինք առջիգ մոմեր վառելով:  
 Մեզի պէտք է այդ գրամը. տո՛ւր՝ կըսեմ՝  
 Տո՛ւր կը ճըւամ՝ գերեզմանիս սա սեմէն\*:

Զե՞ս տար ամբողջ. գիտեմ որ դուն չես փաւոր.\*\*  
 Ճարտարւորէ՛, ինչո՞ւն՝ նայիմ կէսը տուր.  
 Կէսին կէսն ալ բաւ է մեզի. տո՛ւր միայն.  
 Ահա քեզի քօնքօրտա\*\*\* մը եղական:

Քսան-հի՛նգով մաքրէ՛ հաշիւդ հայուն հետ.  
 Գիտես որ սա պահանջ մը չէ անհեթեթ:  
 Բայց կը սոսկամ լուռթենէդ . . . հա՛, ասա՛նկ  
 Զես քաշուիր դուն հոչակուելէ մե՛ծ սնանկ:

### Յ. Զարքրեան

\*) Այս ոտանաւորը գրած է մեռնելէ 1-2 ամիս առաջ:

\*\*) Հոչակաւոր խաչագող Քաւոր Պետրոս:

\*\*\*) Մնանիներուն հաշուեյարդարութիւնը: Ծ. Հ.

### ԳՈՒՍԱՆՈՒՆԻՆ



Հա՛ հա՛, ինքն է, կայծ ու կայծակ երգչուհին,  
 Որին ի տես՝ ցաւերս ամեն կը ցնդին.  
 Փորձ մարդն ան է, որ յուզուած է անգորով  
 Գուսանուհւոյն տարամերժիկ սրտին բով:

Աստղեր լուսին փախ կուտային արտաւած,  
 Երբ ի տես գար ինք՝ այդ արև վեհապանծ.  
 Ինքն էր, ինքը՝ այդ երգչուհին, որ իր ձիգ  
 Նայուածքներով՝ յոյս կուտար ինձ վազանցիկ:

Բեմին վրայ՝ աչքերն յառած երկւորեակ՝  
 Վառարաններն՝ ուրկէ ցայտէր բոց կրակ,  
 Հէգ պատանուոյս՝ կուգար վառել անխնայ,  
 Սիրտը, որ միշտ այրի, մըրկի ու միայն:

Ինքը արևս, ինքն իտէալս, իմ երազ.  
 Իոկ ես դժբաղդ մոլորակը՝ ես նոխազ.  
 Աչքին առջև, ոտքին ներքև յարածամ  
 Աղի արցունք ցանցընելով, գայի ման:

Սիրտս աւերակ, քար քանդ եղած ման ի ման  
 Զուր օրերըս կ'անցունէի անկուման.  
 Հոգիս էր բաց, քսակըս բաց, սիրտըս բաց,  
 Իրեն՝ աւա՛ղ, բաղդն էի ես, բաղդն ու հաց:

Բայց ճիւղաղ մ'էր գուսանուհին արտառոց.  
 Ի՞նչ փոյթ իրեն՝ պատանեկիս լաց ու կոծ.  
 Իր քմայքին կը ձօնէի ես՝ բիւր ա՛հ,  
 Զոր ինք հեգնէր, հա՛, հա՛, հի, հի, քահ, քահ, քահ:

Տեղիչ



Տ Ա Ռ Ա Պ Ե Ա Լ Ը

1898

Հսկայ վանքերուդ՝  
— Որք փլան գլխուդ—  
Աւերակներուն,  
Ըրին ճղքեղ բուն.  
Ու Դուն լոեցիր:

Քեզ ձօնուած խունկին՝  
Քուրդերը թքին.  
Ժամ ու պատարագ,  
Ըրին ծաղր ծանակ.  
Ու Դուն լոեցիր:

Խաչըդ քառաթեւ՝  
Մահիկին առջեւ,  
Ջարդ ու բուրդ ըրին,  
Ճակտիդ նետեցին.  
Ու դուն լոեցիր:

Սեպուհէն Մասիս,  
Եփրատէն Տիգրիս,  
Ծով դարձաւ արիւն՝  
Քեզ պաշտող հայուն.  
Ու Դուն լոեցիր:

Հարսեր՝ ամուսնուն  
Ծոցէն սիրասուն,  
Խլեցին տարին՝  
Որդիք Ղուռանին.  
Ու Դուն լոեցիր:

Երկինքէն տեսար  
Մանկունք անհամար՝  
Ծիծերու վրայ,  
Ա՛խ, արիւնլուայ.  
Ու դուն լոեցիր:

Ա՛լ չը կար առողջ  
Մէկ հատ արու՝ ողջ.  
Սաղմը արգանդին՝  
Սուինի զարկին՝.  
Ու Դուն լոեցիր:

Հրեշտակք ընդ փոյթ  
Թափեցան գլխուդ.  
«Վերջ տո՛ւր — գոչեցին—  
Ահեղ ոճիրին»:  
Ու Դուն լոեցիր:

Աստուծոյ որդի՛,  
Քարերն իսկ քեզի՛  
Պոռ պոռ պոռացին,  
«Վերջ տուր նախճիրին».  
Ու Դուն լոեցիր:

«Մեռած չէ, ողջ է,  
անքուն կը հսկէ՛»  
Կ'ըսեն քեզ համար,  
Էակք անհամար.  
Հաւտա՞նք. ի՞նչ կըսես,  
Երբ միշտ կը լոսես:  
Տ. ՃԳԴ ԱՒՈՐԵԱՆ

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ս

Ահա՛ քու խօսնակ.  
Սրտիդ ի վանդակ,  
Բանտէ զայն ընդ միշտ  
Անլաց ու անվիշտ

Ս . . .

Զ Մ Ե Ռ

Հեւ ի հեւ հասաւ արեւոր ձրմեռ,  
Անձրեւն ու բուքը քարշ տալով յետին,  
Դաշտերն են թափուր, պարտէզք կիսամեռ՝  
Թոչնոց երգեցիկ խոմբեր կ'անհետին:

Վերէն երկինքը խոժոռ կը նայի,  
Կատղած կը փչէ քամին դառնաշունչ.  
Կատղած կ'ուռենայ եւ ծովն ամայի,  
Առուակը վախէն սահի անշըշունչ:

Հասաւ հեւ ի հեւ ձմեռ սպիտակ.  
Սարսուռը ամբողջ աշխարհն է առեր.  
Մտա՞ւ ցուրտն արդեօք բու ալ կուրծքիդ տակ.  
Է՞ր համբոյրներուդ աղբիւրն է սառեր:

\* \*

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ը

Մոռցա՞ր ժամը մթազգեստ՝ երբ առանձին  
Լապտերներուն դողող լոյսէն, ո՛հ, թաքուն  
Համբուրուեցանք մենք երկար.  
Վերէն՝ երկնից թաց աչեր լոկ շիտեցին,  
Վարը՝ մեր մօտ՝ գիշերապահ մը կէս քուն  
Եւ իր արթուն ցուպը կար:

\* \*

Ն Ո Ւ Է Ր Ր Մ Ը Ա Ռ Ք Ի Ի

Գ Ի Ք Ո Յ Կ Մ Ը

Այս կը բերեմ ընծայ քեզ.  
Դու որ սիրես գեղեցիկն  
Եւ խորհուրդին խնկարկես.  
Եւ ասոր հետ՝ աւասիկ,  
Բոց մ'ալ սրտիս խորերէն՝  
Հպի չըթանցդ ու վառի  
Սիրտըդ ի վար մեղմօրէն.  
— Պիտ՝ հսկե՞ս որ չը մարի:

Աշուղ







1898

Սա երկինքին տխրունակ  
Մեղանոյշ աստղն ըլլայի.  
Ու արտասուաց յորդ վտակ  
Աւերց վրայ ցանէի:

Կարմիր վրէժն ըլլայի  
Մեր զոհերուն անհամար.  
Ոտքիս ներքեւ բռէի  
Մեծ Գազանը, շանթահար:

Կամ նոր Տիգրան մ'ըլլայի.  
Ափղահակը սա վատթար  
Կտոր կտոր ընէի,  
Ու յիշուէի դարէ դար:


Անյաղթ Մովսէսն ըլլայի,  
Արեան ծովէն փոթորկուն  
Դէպ Արարատ չուէի,  
Հէգ ցեղիս հետ աննկուն:

Կրակ ու բոցն ըլլայի  
Մասեաց սարին շանթարձակ.  
Գոռ որոտամբ փշրէի  
Փարաւոնին գահն ու թագ:

Կամ Աստուծոյ անվախճան  
Քունին դեղթափն ըլլայի.  
Որ արթննար մի անգամ,  
Դիտել վէրքերն հայրենի:

Սուր աւաչը ըլլայի  
Լալերդի մը դառնացած  
Ու երեսին գոռայի...  
Գթա՛ ալ եւս, ո՛վ Աստուածա:

Տ. ձգնաւորեան



# ԱՔՍՈՐԵԱԼԸ

Պատկերս՝ Ս. Շիսանեանի

## Ա.

1889 թուականին էր:

Կ. Պօլսոյ եղեռնադատ ատեանը, հիմնուելով ոստիկանութեան գաղտնի գործակալներու տեղեկագրին վրայ, ցմահ աքսորանքի դատապարտեց բնիկ վանեցի Մուրատեանց Շահէնը, որ հազիւ քսանութը տարու կար: Անոր յանցանքը խռովարարներու ընկերութեան պատկանիլն եղած էր. ուրիշ ոչի՛նչ: Ու Շահէն զրկուեցաւ Պէնկաղի, որ Ափրիկէի վատառողջ աքսորավայրերէն մին էր:

Հոս չի պիտի պատմեմ թէ՛ Շահէն ի՞նչ տառապանքի օրեր ունեցաւ, ի՞նչ վշտեր զգաց եւ ի՞նչ հառաչանքներ քաշեց՝ իր սիրելիներէն զրկուած մտալուն համար: Ո՛չ, այս բոլորը զանց կ'առնենք, որովհետեւ ատով թուրք կառավարութեան գաղափարներէն կրկնած պիտի ըլլանք միայն: Այլ պիտի ըսեմ թէ՛ Շահէն տասներկու տարուան աքսորանքէ մ'ետքը, յաջողեցաւ միջոց մը գտնել ու խոյս տալ:

Ահա՛ ամբողջ անցեալը այդ մարդուն:

## Բ.

Բայց հիմակ ո՞ւր կ'երթար Շահէն:

Ա՛խ, անիկա լուր չունէր թէ իր ծննդավայրը կոտորածի սեւ օրեր անցուցած էր, թէ իր հայրենակիցները ծիաշունչ աւերակներու տակ կը մնային եւ թէ արիւն արցունք կը հոսէր հայրենիքի ամեն կողմը...:

Ափրիկէի այդ չնչահեղձ մթնոլորտէն ազատուելով, Շահէն ինկած էր լեռնէ լեռ, սարէ սար: Անիկա շարունակ կը քալէր, որ օր մը առաջ հասնէր իր սիրելեաց գիրկը եւ տասներկու տարուան տառապանքները մոռ-



նար: Արդարեւ, չը նայելով այն բոլոր վտանգներուն, արկածներուն ու ոստիկանական հսկողութեանց, Շահէն ամբողջ չորս ամսուան ձամբորդութենէ մ'ետքը, հասաւ իր ծննդավայրին վրայ չուք ու փառք տարածող վարա-  
ջայ Սարին ներքեւ ու հոն օր մը անցուց:

Թէ ինչե՛ր կ'անցնէին այդ քաղաքալին մտքէն ու ինչե՛ր կ'երագէր . . . Աստուած միայն գիտէ:

Վերջապէս գիշերով քաղաքը մտաւ, որ հազիւ ժա-  
մու մը հեռաւորութիւն ունէր իր ապաստանած վայրէն:

Խոր մթութիւն մը կը պատէր ամեն կողմ ու քա-  
ղաքին չարագուշակ մթութիւնը կ'ընդհատուէր շունե-  
րու ոռնումներով ու բուերու վայրեններովը: Շահէն  
անցաւ իրեն ծանօթ արուարձաններէն ու մտաւ ա՛յն  
փողոցն, ուր կը գտնուէր իր հօրեանկան տունը: Կամաց  
մը դուրսը զարկաւ ու սպասեց որ բանան զայն: Բայց  
ձայն ձիւն չելաւ ներսէն. ան ատեն պարտաւորուեցաւ  
աւելի ուժգին կերպով զարնել դուռին: Այս անգամ եր-  
կիւղալի զգուշութեամբ մը դուռը բացուեցաւ եւ սեմին  
վրայ երեւցաւ յիսունն անցած, կոնձած, դալկատիպ ու  
դողդոջուն պառաւ կին մը, որուն ձեռքը ճրագ մը կար:  
Շահէն, որ տոկուն ու վեհ նկարագիր մը ստացած էր  
տառապանքներու աշխարհին մէջ, մէկէն ի մէկ չը յուզ-  
ուեցաւ, այլ մօտեցաւ այդ պառաւին ու հարցուց:

— Խնդրեմ, խաթուն մարէ, գիշերուան սղար մը  
չունի՞ս ինձի. դուրս մնացեր եմ:

Բարի պառաւը, որ Շահէնի մօրաքոյրն էր, սիրտը  
փլած ձայնով մը պատասխանեց:

— Ունիմ, զաւակս, եկու՛ր ներս:

Շահէն առաջնորդուեցաւ սենեակ մը, որուն կան-  
կարասին միայն միւսեւր մը ու երկու խարխուլ աթո-  
ռակներ էին:

— Խաթուն Մարէս, այս տունին մէջ մինա՞կ ես  
դուն, հարցուց Շահէն՝ խղրուելու մօտ ձայնով մը:

— Ա՛խ, չէ՛, զաւակս, մինակ չէի՛ . . . Բայց՝  
Աստուած տունը քանդէ զայլմին, մինակ եղայ, պա-  
տասխանեց պառաւ կինը՝ չը կրնալով զսպել այքերուն  
տաք արցունքները, որոնք թափուեցան անոր թօշկած  
այտերուն վրայէն:

— Չեմ հասկնար, խաթունս, ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ըսել կ'ուզեմ թէ կոտորածի ժամանակ այս տու-  
նը շատ զոհեր տուաւ:

— Կոտորած եղաւ:

— Հարկա՛ւ . . . դուն իմացած չե՞ս:

— Չէ՛, ուսկի՞ց պիտի իմանամ: Պատմէ՛, խնդրե՛մ:

Բարի պառաւը չը մերժեց: Սկսաւ պատմել թալանի  
ու կոտորածի տարիներն՝ իրենց սուկալի յիշատակնե-  
րովը: Այո՛, այդ պատմութեան մէջ յայտնեց թէ Շահէնի  
մայրը մեռած էր, հայրը սպաննուած էր, կինը քուր-  
տերն առեւանգած էին, իսկ մէկհատիկ աղջիկը՝ Նարկիզ,  
հազիւ տասը տարու, հարէմանոցը քաչկատուած էր: Ու  
Շահէն որ մտիկ ըրած էր ամբողջ պատմութիւնն ու  
համբերած էր, ա՛լ չը կըցաւ ինքզինքը զսպել ու լացաւ:  
Յետոյ կսկծալի ձայնով մը հարցուց:

— Ո՛հ, Խաթուն Մարէս, գիտե՞ս այդ հարէմանոցն  
ո՞ր ապարանքին մէջ կը գտնուի:

— Գիտեմ, բայց ի՞նչ օգուտ որ գազանի մը ձեռ-  
քին տակ է ան, պատասխանեց պառաւը:

— Ատ աղջիկը Մուրատենց Շահէնի աղջիկը չէ՞ մի:

— Ճի՛շդ է, սակայն Մուրատենց Շահէնը ուսկի՞ց  
կը ճանչնաս:

Այս հարցումին վրայ՝ Շահէն մօրքրոջ գիրկն ին-  
կաւ ու բացազանչեց:

— Մօրքո՞յր, սիրելի՛ մօրքո՞յր, ան ո՞րչափ փոխ-  
ուեր եմ որ չը ճանչցար զի՛ս:

Ու երկուքն ալ ժամերով լացին:

9.

Շահէն՝ մօրքրոջմէն հաստատապէս իմացած ըլլալով  
որ աղջիկը կառավարութեան ընդհ. գատախաղ Հիւսնի  
Պէյին տունը կը գտնուէր, մտադրեց թէ՛ անոր փա-  
խուստին համար միջոցներ ձեռք բերել եւ թէ՛ իր վը-  
րէմն ալ լուծել ամենէն ետքը:

Ըսինք թէ՛ քաղաքալայրին ու անկից դուրս կղած  
քաղաքներու մէջ ինքզինքը ոստիկանութեան աչքերէն  
ժածկելու համար շատ միջոցներ հնարեց եւ շատ բաներ  
տրվեցաւ: Շահէն՝ իր քաղաքալայրին մէջ հմտացած ըլ-  
լալով Սրարբերէնի, սքանչելի կերպով թուրք կրօնական  
մը կրնար ըլլալ եւ կը կատարէր մահմտականութեան  
ամեն ձէսերը հետեւարար մզկիթ մը գիմեց ու յաջողե-  
ցաւ պաշտօն մը ստանալ:



Անունը Հաֆըզ էր այդ միջոցին. ձայնը շատ անուշ ու ներդաշնակ ըլլալուն պատճառաւ քիչ ժամանակուան մէջ մեծ հռչակ հանեց անիկա ու պատիւ ունեցաւ մինչեւ իսկ բարձրաստիճան անձերու ապարանքն ալ յաճախելու: Եւ որովհետեւ Հիւանի Պէյ չափազանց կրօնամոլ էր, ամեն ատեն կը փափաքէր որ Հաֆըզ իր ապարանքն երթայ ու արարական լեզուաւ մեղանոյշ աղօթերգեր կարդայ:

Օ՛հ, այդ էր, այո՛, այդ էր Հաֆըզի ալ փափաքը: Հիւանի Պէյի ապարանքը զարնուրելի բանտ մըն էր, ուր քաչկոտուած էր իր աղջիկը . . . : Ի՞նչ ընէր որ բանտը գերեզմանի մը փոխուէր Հիւանի Պէյի նման գազանացած անբարոյականի մը համար:

Անցած էին երեք ամիսներ: Օր մը Հիւանի Պէյ յանձնարարեց անոր, որ Արապ մանկլաւիկի մը հետ հարէմանոցի մեծ սրահը երթայ ու այնտե՛ղ աղօթքի մեներգներ կարդայ, որովհետեւ հարէմի կիները այդպէս խնդրած էին: Հաֆըզի աչքերուն մէջ երջանկութեան ճառագայթ մը ցոլաց ու սիրտը ըսկըսաւ զարնել կործքին տակ: Կէս օրը ժամ մը անցած էր, Հաֆըզ եւ մանկլաւիկը մտան հարէմանոցի մեծ սրահը, ուր սրիկայ Հիւանի Պէյ երբեմն կ'երթար եւ՝ գլխացի ատենով գերուհիներն ու հարձերը, կ'ըրօսնուր:

Հաֆըզ մէկ անկիւնը նստեցաւ եւ ձեռքն առաւ չափեօր զոր կեանքին մէջ սիրած էր, եւ որով առաջնորդուած՝ քսորավայրէն ինչուան հօրենական տունը:

Քիչ յետոյ Հիւանի Պէյ եկաւ:

— Սկսէ՛, սիրելի՛ Հաֆըզս, հրամայեց զարչելի հրէչն, ու ինքը բազմոցին վրայ երկնցաւ:

Հաֆըզ՝ դողօջուն մասները չափեօի լարերուն վրայ դրաւ ու սկսաւ նուազել: Անոր ներդաշնակ, արցունքոտ ու անուշ ձայնէն՝ հարէմանոցը դրդուեցաւ ու բոլոր կիները մեծ դահլիճին մէկ անկիւնը հաւաքուեցան:

— Եկո՛ւր քովս, եկո՛ւր, Սօ՛նա, հրամայեց Հիւանի Պէյ: տասներկու տասներեք տարեկան հուրնիրերգէն աղջրկան մը ուղղելով իր խօսքը: Դուն ամենուին չը պարեցիր իմ առջիս՝ թո՛ղ Հաֆըզ չափեօր քաչէ, իսկ դուն ալ պարէ՛: Եկուր . . . :

Մանկամարդ աղջիկը, որ կը դողդոջար իր ամբողջ էութիւնովը, պժգանք արտայայտող նայուածք մը նետեց Հիւանի պէյին վրայ ու կթոտած քայլով մը մօտեցաւ:

— Պիտի պարե՞ս այսօր, հարցուց Հիւանի Պէյ:

— . . .  
— Չե՞ս պատասխաներ, վրայ բերաւ հրէչատիպ մարդը: Պատճառը . . . աս քու յամառութիւնդ ո՞ւր պիտի հասնի, կեա՛վուր: Գիտցա՛՞մ ըլլաս որ օր մը խեղճել կուտամ քեզի սա ապարանքին մէջ:

Ու Հիւանի Պէյ ոտքի ելնելով խոչոր ապտակ մըն ալ իջեցուց թշուառ աղջկան երեսին:

Այս անագորոյն ու սարսռալի տեսարանին վրայ՝ ի՞նչ եղաւ Հաֆըզ, ի՞նչ զգաց: Օ՛հ, աննկարագրելի է:

Կը գողար բոլոր մարմնովը՝ տաք ու պաղ քրտինքներ կը հասէր իր ձակտէն վար ու սիրտը կը բզբտուէր իր խորունկ վէրքերուն ու դաճնութեանը մէջ:

Կեա՛վուր, կեա՛վուր . . . :  
Ուրե՞մն . . .

Աստ՛ուած իմ, ատ տառապեալ հրեշտակը՝ իր աղջրկին էր մի՞թէ . . . : Վայրկենական մտածումներէ, տրամաբանութիւններէ ու կսկծումներէ ետքը՝ զրկեթէ ապուշի մը պէս սկսաւ նայիլ որ կը թուէր թէ կորսնցուցած էր ինքզինքը: Գալով Հիւանի Պէյին, այդ գազանարարոյ մարդը՝ իր բարկութեան մէջ, բնա՛ւ չը կրցաւ կռահել Հաֆըզի հոգեկան վիճակը, միայն թէ՛ ոտքի ելաւ ու ըսաւ.

— Երթա՛նք, Հաֆըզս, սիրտս շատ նեղուեցաւ սա կեա՛վուրի աղջկան ըրածին: Հաւատա՛ որ սպաննելու կուգայ: Այնքա՛ն յամառ, այնքա՛ն պինդգլուխ ու այնքա՛ն անհնազանդ է որ կը կատղեցունէ զիս:

Հաֆըզ՝ քիչ մ'ինքնիրեն եկած էր ու յաջողած էր զսպել հոգւոյն սրտթրումն ու աչքերուն արցունքները: Հետեւարար՝ ձայնը խեղդելով իր մէջ, հարցուց.

— Կարծե՞մ տարիքը փոքր է՝ խելքը չը հասնիր՝ այդ է պատճառը:

— Փոքր ըսածդ՝ նորէն տասներեք տարու կայ, սիրելի՛. Հաֆըզս, առարկեց Հիւանի Պէյ բոնազրօսիկ ժըպիտով մը: Մի՞թէ այդ տարիքին մէջ քիչ աղջիկներ անցած են իմ ձեռքէս: Օ՛հ, կը սխալի՛ս, անիկա ամեն բան գիտէ, անոր խելքը ամեն բանի կը հասնի: Հըր՞մ . . . ան ի՛նչ կեա՛վուր է որ:

— Կեա՛վուր ըսիր, բացազանչեց Հաֆըզ՝ խորին զգուանք մը կեղծելով իր չթմանց վրայ: Չըլլա՛յ թէ այդ աղջիկը կեա՛վուրի աղջիկ է, սիրելի՛ Հիւանի Պէյս:



— Այո՛, կեալուրի աղջիկ է. երկու հատ ունիմ. բայց մին վարժուեցաւ. բնաւ հոգ չընեմ. իսկ ասիկա սոսկալի մէկն է. ոչ կը համոզուի եւ ոչ ալ կը յուսահատի. միտը բզիկ բզիկ ընելու ըլլաս, նորէն կամքը չը կոտորեմ ու խօսքդ չընեմ:

— Աղէ՛կ, ատոր միջոցը կայ. նախ պէտք է ճշմարիտ կրօնքն ընդունել տալ. եղած է ատանկ բան մը:

— Այո՛, բայց անկարելի եղաւ: Մեր Շէմսէտտին Պէյը՝ մօլլա մը զրկեց որ համոզէ: Եկաւ մօլլան: Ի՛նչ որ ըսաւ, ի՛նչ որ ըրաւ, անօգուտ եղաւ. այդ անդգամը մազ մը չը փոխեց իր կամքէն: Շիտակն ըսելով՝ անտանելի մէկն է, սակայն սիրուն է ու չեմ կրնար աչքէս հեռացունել:

— Եթէ թող տաք ինծի, սիրելի՛ Պէյս, ես յանձն կ'առնեմ այդ աղջիկը համոզելու:

— Կ'ընդունիմ եւ չափազանց շնորհակալ կ'ըլլամ եթէ յաջողիս:

— Ուրեմն պատուիրեցէ՛ք մանկկաւիկներուն, որ վաղը թողուն զիս հարէմանոցը մտնելու, ուզած ատենս:

— Խի՛ստ լաւ, ազատ ես. նկատել տուաւ Հիւսնի Պէյ, ու Հաֆըզի հետ դուրս ելան հարէմանոցէն:

Գ.

Հաֆըզ, այսինքն մեր ծանօթ Շահէն, հետեւեալ օրը հարէմանոցը մտաւ ազատ կերպով ու քովը կանչեց կեալուրի աղջիկը, որուն Սօնա անունը կուտային հարէմանոցին մէջ: Մանկամարդ գերուհին, որ զգուանք կ'ըզգար ճերմակ կամ կանանչ փաթթոցաւոր կրօնականներ տեսած ատեն, աչքերը կուրծքին վրայ սեւեռած՝ մօտեցաւ Հաֆըզին ու արձանի մը պէս կեցած՝ սպասեց:

Հաֆըզ՝ ս'ըչափ որ կրցաւ, զսպեց ինքզինքը ու խեղդուկ ձայնով մը դողդալով, հարցուց.

— Սիրելի՛ աղջիկս, լսեցի որ ճշմարիտ կրօնքն ընդունել չես ուզեր ու Հիւսնի Պէյը կը բարկացունես եղեր, իրա՞ւ է:

Սօնա չը պատասխանեց. բայց անոր տրտմալի աղուոր աչքերէն արցունքի տաք կաթիլներ սկսան հոսիլ, որոնք հալած կապարի հատիկներու պէս Հաֆըզի հոգոյն մէջ լեցուեցան:

— Մի՛ լար, աղջի՛կս, յարեց Հաֆըզ՝ որուն խոսմանը ձայնը կը խեղդուէր. մի՛ լար, ես պիտի աշխատիմ որ դուն ուրախ ըլլաս ու այս ապարանքին մէջ քու ճակատագիրդ փոխուի: Գիտցի՛ր որ Հիւսնի Պէյ շատ բարի մէկն է ու ըսաւ ինծի որ ամենէն աւելի քեզ կը սիրէ եղեր:

— Թո՛ղ չը սիրէ զիս. պէտք չէ՛ ինծի. մրմնջեց Սօնա՝ այնպիսի՛ ձայնով մը, որուն մէջէն վրէժխնդրութիւն կը պոսթկար: Ա՛խ, չը գիտես, չը գիտե՛ս, անիկա գազան մըն է. անիկա մօրս արիւնը ծծեց: Ոչ, ո՛չ, տարէ՛ք, կախեցէ՛ք զիս, չուան մը անցուցէ՛ք վզէս ու խեղդեցէ՛ք. կ'ընդունիմ, բայց հաւատքս չե՛մ ուրանար. կեալուր եմ ձեզի համար, գարձեալ կեալուր պիտի մնամ ու կեալուր պիտի մեռնիմ:

— Ինչո՞ւ կեալուր պիտի մնաս, աղջի՛կս, չե՞ս տեսներ կեալուրներու վիճակը:

Մանկամարդ աղջիկը նորէն լուռ մնաց. բայց աչքերը վեր առած էր այս անգամ ու ակամայ կերպով կը նայէր Հաֆըզի աչքերուն մէջ:

Հաֆըզ դատն ու կսկծալի տրտմութեան մը մէջ կը գտնուէր: Ի՛նչ ընէր. եթէ յայտնէր իր ո՛վ ըլլալը, աղջրկան պիտի կրնա՞ր հաւտացունել այդ բանը: Ուզեց փորձել: Զգուշութեամբ մը ոտքի ելաւ ու դուռը բացաւ. ականջ գրաւ չորս կողմ: Սենեկին քովը մէկը չկար: Ան ատեն մօտեցաւ Սօնային ու ըսաւ հայերէն լեզուաւ:

— Մօրմէ՛դ լսած ես թէ հայրդ ողջ է:

Այո՛, ամեն ատեն կ'ըսէր ինծի մայրս՝ թէ հայրդ ողջ է. բայց շատ հեռու է անոր տեղը, պատասխանեց աղջիկը մորմնքուած ձայնով մը:

— Ո՛հ, աղջի՛կս, գիտցի՛ր որ ես քու հայրդ եմ եւ հոս եկած եմ քեզի ազատելու համար:

Ու անդուսպ խանդազատանքով մը գրկին մէջ առաւ անոր գեղեցիկ դուխն ու ճակատը եւ համբուրեց՝ տաք ու կարօտցած չրթունքով մը: Հաֆըզ՝ այնպիսի անուշ եւ յուզիչ շեշտ մը գրած էր իր այս վերջին բաներուն մէջ, որ աննկարագրելի է: Անտնք ուղղակի հայրական սրտէ կը բզկէին եւ Սօնայի ամեն տարակոյտը կը փարատէին, մանաւանդ թէ իր մայրնի լեզուի էր, որ կը խօսէր իրեն հետ այդ կեղծ մօլլան: Ուստի, Սօնա, զրեթէ ապուշի մը պէս, խելայե՛ղ ու յուզեալ՝ վիճակի մը մէջ խօսք չը հանեց բերնէն, այլ թողուց որ այդ



բարի հրեշտակը կուրծքին վրայ սեղմէ զինքը: Միայն թէ կուշտ մը լացաւ:

— Մտիկ ըրէ՛, դաւա՛կս, ըսաւ Հաֆըզ, ժամանակ չը կորսնցունենք: Քանի որ մեծ գահլիճը մէկը չը կայ, դուն կամաց մը քու սենեակդ մտի՛ր: Այս գիշեր հոս եմ: Միջոցը գտած եմ ու պիտի կրնամ փախցունել քեզ: Ուրե՛մն, մնաս բարո՛վ, սիրական աղջի՛կս:

Ու Հաֆըզ վերջին անգամն ըլլալով համբուրեց աղջիկն ու հեռացաւ: Մանկամարդ գերուհին մինակ մընաց ու բացազանչեց:

— Աստուած իմ, դո՛ւն լսէ ձայնս:

### Ե.

Գիշերուան ժամը տասներկու կը զարնէր: Ապարանքին մէջ խոր լուսթիւն մը կը ախրէր: Ամեն ոք կը քնանար: Բայց մէկը կար որ չէր քնանար. մէկը կար որ վայրկեանէ վայրկեան առիթի մը կ'սպասէր: Ատիկա Հաֆըզն էր, որ այն գիշերը Հիւսնի Պէյի խնդրանքով ապարանքը մնացած էր: Հաֆըզ կ'սպասէր որ Հիւսնի Պէյ հարէմանոցը երթայ:

Արգարեւ, Հիւսնի Պէյ կամաց մը իր սենեկէն ելաւ եւ ուղղակի հարէմանոցի միջանցքը մտաւ եւ սենեակ մը բացաւ: Այդ սենեակը Մօնային յատկացուած սենեակն էր, որ ապարանքին ամենէն խորը կը գրտնուէր: Հիւսնին մտաւ՝ չը մտաւ, ահա՛ ետեւէն Հաֆըզ ներս անցաւ ու, առանց ժամանակ կորսնցունելու, երկու բազուկներուն մէջ առաւ անոր վիզը եւ դաշոյնի հարուածներով գետին փռեց զանի: Այս արդար ոճիրն այնքա՛ն արագ կերպով կատարուեցաւ, որ շուկ մ'անգամ չարձագանգուեցաւ ապարանքին մէջ:

Սօնա՛ որ սարսափած կը գիտէր այս ամէնը, իսկոյն նետուեցաւ Հաֆըզի գիրկը ու մրմնջեց.

— Հա՛յր իմ, հա՛յր իմ, փախչի՛նք այս անէճքնեքով ու ոճիրներով լի յարկին տակէն:

— Կ'երթա՛նք, աղջի՛կս, կ'երթա՛նք, նկատել տըւաւ Հաֆըզ ու Սօնան հետն առնելով, գզուշութեամբ մը հարէմանոցի միջանցքէն պարտէզն իջաւ եւ անկից յաջողեցաւ յարակից այգիի մը մէջ մտնել:

Գիշերապահին ձուկանը չորսը կը զարնէր: Հաֆըզ

ու Սօնա լեռներու մէջ կրցին ապաստանիլ եւ ժամանակ մըն ալ Տէր-Յուսէփան որդւոյ վանքը մնալ, որ Պանտ— Մահի կոչուած գետին վրայ կը նայի:

### Գ.

Այսօր Հաֆըզ, — այսինքն Շահէն — կենդանի է դեռ եւ կ'ապրի Պարսկաստանի մէջ իր սիրական աղջրկան հետ:

Իսկ Հիւսնի Պէյի սպանման գաղտնիքը ծածկուած մնաց, որովհետեւ մինչեւ հիմակ կը կարծեն թէ Հաֆըզ անբարոյական մէկն ըլլալուն համար, սպաննած էր զանի ու փախուցած էր կեալուրի աղջիկը:

Ա. Շիսալեան



### Ն Ա Յ Ո Ւ Ա Մ Ք Դ



Սա թաւ յօնքերուդ հովանիին տակ,  
Ո՞ւմն է՛ այդ նայուածք սիրավառ ու տաք,  
Անահի՞տն ես դուն՝ ո՛հ, ոսկեծրղի  
Նուիրագործողն սիրոյ ծիծաղի:

Քու նայուածքիդ մէջ սիրտ մը կայ անհուն,  
Որ կը ցոլացընէ սէր, յոյզ գեփգեղուն,  
Կ'ըղձամ հոն շընչել, կեանքըս հոն ապրիլ,  
Միշտ անկէ յուսալ, անոր մէջ մեռնիլ:

Պ . . . .





Շ Ա Ք Է

ՍԱՍՆՈՅ ԳԻՒՑԱԶՆՈՒՆԻՆ

ԿՈՒՐ ԱՈ ՏԻԿԻՆ ԼԻՍԻ ՅԱԿՈԲԵԱՆ

Շաքէ՛ն եմ ես. աղջիկը վե՛հ ժայռերու՝  
Որ դարերո՛ւ շանթ ու կայծա՛կ մշտագոռ  
Որոտնե՛րը հեգնեցին:

\* \* \*

Կ'երգնո՛ւմ ահա.  
Կաթն ստինքի՛ս, սրտի հատո՛ր զաւակիս  
Անո՛ւշ ըլլայ. իսկ արի՛ւնը եռ ու զեռ  
Երակներուս, պէտք է ձօնուի՛ն իմ ցեղին՝  
Ազատութեա՛ն նուիրական դրօշին:

Շաքէ՛ն եմ ես. աղջիկն հպա՛րտ ժայռերու  
Որ դարերու շանթ ու կայծա՛կ մշտագոռ  
Որոտնե՛րը հեգնեցին:

Ես ընկրկի՛մ...

Չէ՛, բնա՛ւ չէ: Մատաղ կեանքիս օղա՛կը  
Կարել կարճել. ա՛յս է պարտքըս սրբազան.  
Որ մահուանըս դրուագներով՝ հայ կնոջ՝  
Իւրցազնութեան օրինա՛կ տամ՝ դարէ դար:

Շաքէ՛ն եմ ես. Սասնոյ լեռանց արձուհին,  
Ուր սորվա՛ծ եմ՝ թռիլ ազա՛տ ու ազա՛տ,  
Գրգօիս հե՛տ պաշտելի:

Ես խնայե՛մ...

Չէ՛, բնա՛ւ չէ: Ազատութեան սուրբ սեղան՝  
Նոխաղ մըն ալ կ'ուզէ ինձմէ անմեղուկ:  
Թուրք ապրելուն՝ հա՛յ թող մեռնի. հա՛յ անուամբ  
Թող գայ գրկե՛լ գերեզմանը ինձի հետ:

Ես արձուհի՛ն, նա արձուի՛կը՝ գրկիս մէջ  
Մա՛յր ու զաւակ՝ պէտք է ձախրե՛նք գէպի մահ.  
Ա՛յս է պարտքը Շաքէ՛ին:

Տեսէ՛ք, տեսէ՛ք.

Գրոհ տալով, ահա կուգա՛յ ժանտաժուս  
Վատ խուժա՛նը արիւնարբու, փրփրած.  
Նա չը՛ ճանչնար ո՛չ սրբութիւն, ո՛չ պատիւ.  
Խլե՛լ կ'ուզէ՛ ինչ որ իմ չէ, անպատկառ:

Սասնոյ աղջիկ, Գրգօի կի՛ն, ե՛ս, Շաքէ՛ն...  
Չէ՛, չե՛մ կարող ասպետութեան աղան ըլլալ.  
Գերեզմա՛նը ող ըլլայ:

Աստուա՛ծ, գիտէ.

Խրախճա՛նը մ'է ինձի համար, այս մահը.  
Սա ժայռէն վար դլորի՛լը՝ տօնական  
Օ՛ր մըն է, ուր հարս կ'երթամ ես՝ հայրենի  
Ազատութեան գաղափարի՛ն պաշտելի:

Արեանս տաքուկ ճապաղիքը գունագեղ՝  
Իմ այս անուշ եւ ահաւոր հարսնութեան՝  
Ա՛խ, օժի՛տը թող ըլլայ:

Թող հայ կի՛նը,

Հայ կարիճին քո՛վը կեցած անվեհեր,  
Թող միատեղ ցնցե՛ն շղթան բռնութեան:  
Վկա՛յ Աստուած, ան կը կոտորի՛ և Մասեաց  
Խրոխտ սարէն կը նշողէ՛ աստղն հայուն:

Հեղո՛ւկ մը կայ, որ այդ շղթան կը փչրէ  
Հեղո՛ւկ մը՝ որ երակնուս մէջ եռ կուգայ:  
Արի՛ւնն է ան՝ վարդագոյն:

Ո՛վ Սասունի,

Ո՛վ գուր, լեռանց ձիւնըսպիտակ սեպ ժայռեր,  
Դո՛ւր ծմակներ՝ աւանդապա՛հ բիւր վշտաց.  
Ընդունեցէ՛ք իմ և զաւակիս սիրասուն  
Թանկ նուէ՛րը. արիւնը տա՛ք ու ցայտուն:

Անո՛վ ցողուն ձեր քարերը սրբասուն.  
Անո՛վ փչրի, շղթան անարգ գերութեան.  
Անո՛վ հրճուի՛ շայտասան:





### ՀՕՐ ՄԸ ԿԱՂԱՆԴՉԻՔԸ



#### Սիրելի տղաւ,

Սյնպիսի տարիքի մը մէջ կը գտնուիս, որ ըստ իս ամենէն վտանգաւոր, ամենէն ճակատագրական տարիքն է: Հիմակ է, որ խառնուածքիդ, կրթութեանդ և ապրած միջավայրիդ ազդեցութեանը տակ՝ պիտի կերտուի ու ձեռքդ պիտի յանձնուի զեկը՝ որ քեզի պիտի վարէ բովանդակ կեանքիդ մէջ, լաւ կամ արկածալից ճամբորդութեան մը բոլոր անակնկալները տալով քեզի: Քու տասնևչորս գարուններովդ կը գտնուիս լեռան մը ամենէն սրածայր գագաթը, ուրկէ մազի չափ գէպի վատ հակում մը՝ անդառնալիօրէն կորուստդ պիտի վճռէ:

Կան սխալանքներ, որ կը դարմանուին. սակայն այս շեղումի սխալը — եթէ գործես — բնաւ չը պիտի կոնսա գարմանել: Յոռի ունակութիւնները՝ երբ անգամ մը կը տիրեն կը տիրապետեն ամբողջ էութեանդ վրայ, ալ եւս դուն՝ անոնցն ես. գահավիժումդ պէտք է շարունակէ լեռան մինչև ամենայնտին աստիճանը, ուր պիտի հանդիպիս՝ քեզի պէս շատ մը այլանդակ ջախջախուածներու և սոսկաս. բայց՝ ափոս, որ վերջին զլլումդ անօգուտ պիտի ըլլայ, բանի որ ոչ ուժ, ոչ կարողութիւն և ոչ ալ կորով պիտի մնայ նորէն մագլցիլ ելնելու գագաթին վրայ, ուրկէ անգամ մը վար գլորեցար:

Ուրեմն սոսկա այդ կորստաբեր վայրէջքէն և հաւասարակչութիւնդ լաւ պահէ՛ առանցքին վրայ, ուր կը գտնուիս այսօր, և ուր՝ ինչպէս ըսի, հիմակուրէն պիտի վճռուին քու ապագայ կեանքիդ բոլոր հաճոյ կամ անհաճոյ պարագաները:

Բաղդի մի՛ հաւատար բնաւ. անիկա՛ յանցապարտ մարդիկներու վերջին ապաստանարանն է, որուն կը կռթնին ինքզինքնին արդարացնելու՝ որքան անիմաստ, նոյնքան և ծիծաղելի եսասիրութեամբ մը: Բաղդը՝ ինքնին բան մը չէ, որ մարդուն զեկավարն ըլլալու չափ բարձր պաշտօնի մը արժանացած ըլլայ. ընդհակառակը մարդն է, որ կը հրամայէ բաղդին և իր իսկ ընթացքովը կը վայելէ անոր վերագրուած մտացածին անուշութիւններն ու թթուութիւնները: Եթէ ես դժբաղդ եղած եմ, պատճառն այն է որ դժբաղդ ըլլալու համար ձեռքէս եկածն ըրած եմ: Ինութեան մէջ ամեն բան իր սկզբնապատճառն ունի. նոյն իսկ անձրևը, ձիւնը, կարկուտը, փոթորիկը եւն: Ասոր կ'ըսեն տիեզերական ընդհանուր օրէնք, որուն մէջ մարդը չէ՝ որ իրաւունք ունեցած պիտի ըլլայ բացառութիւն կազմելու և անասելով իր ձախողուածներուն բուն շարժառիթը — որ ինքն է — օձիքը բռնելու բանի մը՝ որ բառարաններէ դուրս բնաւ գոյութիւն չունի:

Ուրեմն՝ տղաս, դուն՝ բու բաղդդ, դուն՝ բու դժբաղդութիւնդ, դուն ես բու ճակատագրիդ տէրը, զոր ուղած կերպովդ կրնաս վարել, միայն ու միայն քու անձնական պատասխանատուութեանդ ներքև: Երբ օր մը — Աստուած չընէ — լալու հարկին մէջ գտնուիս, գիտցի՛ր որ ինքնարդարացումի ճամբայ չունիս բնաւ. ինքզինքդ, միայն ինքզինքդ գատապարտէ և հանդարտ մէկ պահուդ, աշխատէ՛ որ դժբաղդութեանդ նախընթաց և յարակից պարագաներուն տողանցումը գայ ներկայանայ մաքիդ առջև, որ դուն ինքնին ճանչնաս ինքնագատապարտութեանդ արդարացիութիւնը և անպղտոր աչքով տեսնես աղբերակը բուն մեղքին՝ որ դուն իսկ ես: «Բաղդը զիս հա-



լածեց, ի՞նչ ընեմս եւն. ըսելով, ուրիշ բան ըրած չը պիտի ըլլաս, բայց եթէ վերահաս չարիքին ուրիշ մը պատասխանատու ըռնելով, ինքզինքդ փրկելու ջանացած և ասով՝ բու՛ նոյն իսկ ինկած եսիդ խունկ մատուցանելու անճարակ միմսութիւնը ցուցադրած պիտի ըլլաս: Առողջ միտքը՝ այսօր՝ բազդի գոյութիւնը կ'ուրանայ և կը նկատէ զայն՝ այն խոշոր ու այլանդակ առասպելներէն մէկը: որոց բով կը նսեմանան աշտարակաշինութեան նման վիթխարի առասպելներն անգամ:

Ըսել է, տղաս, դուն ես՝ որ այսօր գրիչը ձեռքդ առած, բու իսկ մատներովդ — լաւ թէ վատ — անջնջելի կերպով պիտի արձանագրես բու ապագայ կեանքիդ դատակնիքը:

\* \* \*

Շատ չը պիտի ծանրանամ՝ դպրոցին մէջ աշխատասէր, ժրջան ըլլալու և դասերդ լաւ պատրաստելու հարկին վրայ. վասն զի այս կէտը՝ նոյն իսկ ամենատգէտ ծնողներու առաջին մտահոգութիւնն եղած է և ամենօրեայ սովորական յանձնարարականն է, որ կը մատուցուի տղոց:

Ես պիտի պահանջեմ, որ բու դասակիցներուդ մէջ, առաջին տեղը գրաւելու համար ամեն ճիգ թափես. ու է դժուարութեան առջև չընկըրկիս, չը յուսահատիս, այլ ընդհակառակը յամառօրէն աշխատիս, մինչև որ յաջողիս: Ասով՝ ոչ միայն բու մտաւոր զարգացումիդ հանդէպ ունեցած տարրական պարտքդ կատարած պիտի ըլլաս — ինչ որ շատ օգտակար է — այլ և այս տարիքէդ, պիտի ընտելանաս առջևդ ելած դժուարութիւնները ջախջախելու մեծ ձիգին և կամքի կորովով մը զինուած, դուրս պիտի գաս կենաց պայքարին մէջ: Ա՛լ ամրացած զօրացած պիտի

ըլլան ջիգերդ և ինքզինքդ հաշտուած պիտի գրանես դժուարութիւններու հետ, որոց յաղթելու գաղտնիքին տիրացած ես արդէն: Զօրաւոր նկարագիրը՝ ինքնապաշտպանութեան այն հիանալի զէնքն է՝ որ դպրոցին մէջ կը դարբնուի, կեանք կոչուած ճամբորդութեան մէջ, զայն օգտակարապէս գործածելու համար: Ունեցի՛ր այդ զէնքը: Եթէ չես ուզեր աշխարհի բիւրաւոր դժուարութեանց առջև շլմորիլ ու յուսահատիլ: Եւ ատիկա ունենալու համար մէկ բան միայն պէտք է: Կամք ու դարձեալ կամք:

Տարիքիդ պահանջն է, որ դպրոցին մէջ ու դպրոցէն դուրս ընկերներ ունենաս: Ոչ միայն բեզի չեմ արգիլեր այդ բանը, այլ մինչև իսկ կը պահանջեմ որ ունենաս: Իրար փնտռել, իրարմով ապրիլ, բնութեան մէկ ընդհանուր օրէնքն է: որուն չենք կրնար անսաստել անպատիժ կերպով: Ամեն հասակ՝ բնականօրէն, իր մասնաւոր պահանջն ունի՝ ընկերակցաբար ապրելու այդ բնազդին մէջ: Քու տարիքդ կը պահանջէ, որ ընկերներ ունենաս, որպէս զի խօսիս, խաղաս անոնց հետ: Պէտք է, որ անպատճառ գոհացում տաս բու այդ բաղձանքիդ. միայն թէ ընտրութեան մէջ սխալանք տեղի չունենայ:

Հոս է որ բու ծնողքիդ պարտքը — դպրոցի ընտրութեանէն յետոյ — աւելի եւս կը շեշտուի. վասն զի անոնք են որ մօտէն պիտի հսկեն բու ընտրութեանդ վրայ և իրենց փորձ տարիքին կ'օթնելով, ետ պիտի քաշեն բեզի այնպիսի տղոց ընկերակցութեանէն, որոնք թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս ապականուած են բնածնական նեխած միմտորտներու մէջ: Եւ դուն ալ պէտք է համակերպիս ծնողացդ այդ փրկարար զգուշացումին,

Գիտես որ, աշխարհը դասակարգելու բաժ-



նուած է, հարուստ, աղքատ եւն., ատոնց ամենէն ալ ընկերներ առնելու ես, որպէս զի պզտիկ հասակէդ գազափար կազմես՝ անոնց ամէն մէկին ապրելու եղանակին ու նիստուկացին վրայ և յառաջացած տարիքիդ մէջ, արդէն իսկ հետդ ունեցած ըլլաս կենցաղագիտական պզտիկ պաշար մը: Կեանքի ընթացքիդ մէջ, այդ դասակարգերու ամենուն հետ ալ գործ պիտի ունենաս: Ս. յդ պարագային, որչա՛փ լաւ է զանոնք գոնէ բիշ մը կանուխէն ճանչցած ըլլալդ:

Վերջին ծայր ճշգրտագան եղի՛ր: Ենթադրենք թէ ժամը 12ին որոշուած է որ տունը գտնուիս, այդ պահուն, եթէ ընկերներուդ հետ խաղի և կամ ուրիշ ոեէ հաճելի ժամանցի մը բռնուած ես, պէտք է անմիջապէս թողուս և երթաս քու ճշգրտագանութեանդ գործնական ապացոյցը տաս. ասով՝ ոչ միայն տանը մարդիկները վշտացնելու անհաճոյ կացութենէն փրկուած պիտի ըլլաս, այլ և կամաց կամաց ծանօթացած պիտի ըլլաս հաճոյքը՝ օգտակարին և կարեւորին զոհելու մեծագոյն իմաստութեանը:

Ուտելու, պառկելու, խաղալու և ամեն բանի մէջ կանոնաւոր եղի՛ր. ընտելացումը այս փրկարար սովորութեան՝ որ միայն քու բարի կամքէդ կախում ունի, քեզի պիտի փրկէ շատ մը ձախողուածներէ, որոնք առաջ կուզան խառնակ ու անկանոն կեանքի մը յարակից անխուսափելի չարիքներէն: Ուստի՝ հիմակուրէն քեզի համար՝ ամեն բանի ժամ ժամանակ ընտրէ՛ և յամառօրէն գործադրէ քու որոշումներդ. այն ատեն, օր մը պիտի տեսնես թէ դուն՝ գերին եղած ես քու ճշգրտագանութեանդ. երջանի՛կ գերութիւն, որ հանգարտ ու խաղաղ կեանքի մը բոլոր բարիքները պիտի շնորհէ քեզի:

Պիտի յանձնարարէի, որ դասերէդ դուրս, ընկերական խնդիրներու վրայ գրուած պզտիկ կտորներ կարդաս. բայց՝ ափսո՛ս, որ մեր մէջ կը պակսին աղոց համար պատրաստուած այդպիտի շահեկան գրուածներ: Վէպ՝ չը կարգաս բնաւ: Ս. յն տարիքին մէջ՝ ուր՝ բնականօրէն, պէտք եղածէն աւելի տենդոտ երևակայութիւն մը ունիս, բացարձակապէս աղէտալի կը գտնեմ վէպերու՝ մանաւանդ ևւրոպական վէպերու ընթերցումը՝ որոց հոգեբանութիւնը ըմբռնելու տակաւին անկարող, աշակերտած պիտի ըլլաս միայն անոնց չոր մասնաբաժանութեանը. և ասիկա քեզի համար այն աղէտքն է, ինչ որ է պզտիկ կրակը՝ վառօգուով լեցուն ամանին համար:

Կրնաս կարգալ և պէտք է որ կարգաս ազգ. կեանքէ առնուած վէպերը, որոնցմէ բարբաղդաբար բաւական կայ հրապարակի վրայ: Անոնք պիտի ճանչցնեն քեզի հին և ժամանակակից գէպքերը և պիտի սորվիցնեն ազգդ սիրելու նուիրական հարկը: Կարգա՛ մանաւանդ յեզափոխական կեանքէ առնուածները: Անոնք արիւնով գրուած, ի մէջ այլոց, պաշտելի առնականութիւններու և հիանալի հայրենասիրութեան գրուագներով լեցուն են, որոնք պիտի ցնցեն քու էութիւնդ. ցնցում մը, որ կեանքէ աւելի կ'արժէ. անոնցմով յուզուէ՛ և յուզէ՛ շուրջիններդ. անոնցմով լաց ու լացո՛ւր քու կիներդ և ինքզինքդ պատրաստէ մեծագոյն զոհողութեանը՝ զոր կը պահանջէ մեր ցաւատանջ հայրենիքը՝ ամեն հայ անհատէ:

Դժբաղդաբար գրքոյկիս սահմանափակ էջերը չեն ներեր այս անգամ՝ աւելի երկար խօսիլ այն ամեն խնդիրներու վրայ, որոնք՝ քեզի պէս աղու մը համար, տակաւին լուսաբանուելու կարօտ են:



Որոշած եմ սակայն Բ. մասին մէջ; զոր Յարգելի  
Հրատարակիչը կը խոստանայ մօտ օրեր հրատար-  
ակել, տեսութիւն մըն ալ ունենալ քեզի հետ  
և ցոյց տալ թէ ի՞նչպէս վարելու ես կեանքը՝  
քու ապագայ տարիքներուդ մէջ ալ:

\* \* \*

Սիրելի տղաս,

Ահա իմ կազանդչէքս: Կը յիշես անշուշտ  
թէ շատ մը կազանգի օրեր, ես՝ քեզի նուէր չէի  
կրնար տալ նիւթական աննախանձելի գրու-  
թեանս պատճառաւ: Չը գիտեմ, պիտի հասնի՞ս  
զարդացման այն աստիճանին՝ որ օր մը՝ կարգա-  
լով այս տողերը, հոգեկան կատարեալ գոհացու-  
մով փղձկիս և բսես՝

«Հայրս իր այս նուէրովը՝ քուած է կազանդ-  
չէքի մէջ ունեցած իր բոլոր անցեալ պարտա-  
զանցութիւնները»:

Տ. ձգնաւորեան



### Ա. Զ. Դ

«Կազանդչէք»ի նիւթերէն շատ կարեւոր մաս մը  
աւելցած ըլլալով, ստիպուեցանք զայն երկու մասի բաժ-  
նել եւ մինչեւ փետր 1 Բ. մասն ալ հրատարակել լոկ  
«Գրական փշրանքներ» անունին տակ, ուր ի միջի այլոց  
պիտի տեսնուին նաեւ «Յեղափոխականի մը կազանդ-  
չէքը անուն վերին աստիճանի սրտայոյզ վէպիկ մը, «Մեր  
ցեղին տկար կողմը» անուն բնկերարանական տեսու-  
թիւն մը, Որդեկորոյս հայրը», «Որբի մը հառաչանք-  
ները» և Յ. Չաքըրեանի քանի մը անտիպ քերթուած-  
ները: Եւ յետոյ առանձին գրքոյկով լոյս պիտի տեսնեն  
«Կամիթ»ը, «Մօնթէ Գառլօ»ն և Յ. Չաքըրեանի կենսա-  
գրութիւնը, որ կը գտնուի Պու. քրէչարնակ Յարգելի անձ-  
նաւորութեան մը քով:

Հրատարակիչ

ՀՀ Ազգային գրադարան



NL0342573



**Մ. ԳԱՂԱՆԴՉԷՔ. ՏՊԱՐԱՆԻ ՄԷՁ ԳՏՆՈՒԱԾ ԾԱԽՈՒ ԳՐԳԵՐ**

ԿԱՂԱՆԴՉԷՔ.— Գին 40 սանթիմ: Չեռքէ ծախողներու համար բնաւ զեղչ չկայ. իրենք ազատ են 5—10 սանթիմ աւելի ծախելու: Ամեն ազգի գրողաթուղթ կ'ընդունուի: Փափաքողները՝ 5 սանթիմ փոստի ծախար աւելի զրկելով, կրնան ունենալ անկէ մէկ օրինակ: [հասցէ՝]

M. KALPAKDJIAN — VARNA (Bulgarie).

**ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ. Պատկերազարդ. Յ. Կ. Պօնճուքեանի:**

Այս ընթերցարանը պատրաստուած ըլլալով զերմանական ամենալիբըն մանկավարժական մեթոտներու վրայ թէ իր դիւրուսոյց եզանակներուն եւ թէ ազատ ու հայրենասիրական գրուածքներուն շնորհիւ արժանացած է արդէն կարող մանկավարժներու գնահատութեանը:

Ա. տարի 70 սանթիմ. Բ. եւ Գ. տարիները մէյմէկ ֆր:

**ԲԱՌԱՐԱՆ, Պուլ.-հայ.-տաճկ: Ասատուր Մկրտիչեանի:**

Սկիզբը բացի Յառաջարանէն ունի բերականական կարեոր գիտելիքներու և կանոններու աւիտիումը (40 երեսի չափ): Մէկ խտրով բառարան մը՝ որ իր պարունակութեամբ և չափաւոր գնով, ամենէն յարմար օժանդակը կը հանդիսանայ պուլկարեէն լեզուն սորվիլ փափարող ամէն դասակարգի մարդոց, թէ՛ ուսանողին, թէ՛ փոճառականին և թէ պարզ արհեստաւորին: Կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով մօտ 30,000 բառեր: Ընտիր թուղթ, մարտի տպագրութիւն: Գինը 5 ֆրանք, դիմել հեղինակին,

ASSADOUR MEGUERDITCHIAN — SOPHIA

Կը գտնուի նաեւ տպարանիս մէջ:

«ԿԱՂԱՆԴՉԷՔ» իս Յարգելի գրողներէն Տիար Տ. Ծղնաւորեան կը ծանուցանէ թէ «ԱՐԳԱՍԻԱՆԴ» ի հրատարակութիւնը՝ անոր վարչութեանը որոշումով յետաձգուած է յառաջիկայ Յուլիս ամսոյ: